Ըսել է հակառակորդը բռնաբար  
 կը քաշկուռէ անոր խօսքը որպէս զի զըր-  
 պարտութիւն մը ընել անոր վրայ կա-  
 ընայ . և իրաւցընէ՝ կը զարմանամ իւր  
 ճարտար մտայը՝ որ ուղեր է ամենամեծ  
 վատութեամբ գէշ գործք մը՝ զըպարտու-  
 թիւն մը ընել ըստ ամենայնի և ըստ ամե-  
 նայն պարագայից . և ասոր մէջ շատ յա-  
 ջողեր է :

Ուրեմն շարունակե՛նք իւր մասանց  
 թուարկութիւնը քննել, որ եզրակացու-  
 թեան սուտ ըլլալը և ձեռնարկութեան  
 իմաստակ խաբէութիւնը տեսնուի քաջ :

23—26 երեսներուն մէջ Փիլիսոսիա  
 յական միջանկեալ ինչիւր մը ըլլալով  
 որ մեր մասանց թուարկութենէն դուրս  
 է, Պեղադեան հերետիկոսութեան հոտ  
 չը կայ հոն . նոյնպէս 26—29 երեսնե-  
 րուն մէջ ալ ազատ կամաց վարդապե-  
 տութեան դէմ ըլլալով ան ալ կը ճգեմք  
 անմիջապէս այս մասանց թուարկութիւ-  
 նը լմննալուն պէս անոր քննութիւնն ալ  
 ճարեւալ ըլլալով, 29 երեսը կուգանք, յո-

բում կըսէ .

« Աեղազիտի դրութիւնը ո՛չ միայն  
 « առաջին գլխուն մէջն է , այլ բոլոր  
 « գիրքը անով տարրացեալ է . որն որ  
 « հաստատելու համար քանի մը ուրիշ  
 « հատուածներ ալ քաղենք զրբէն » : Աւ  
 « յետոյ՝ Նորին Սրբազնութեան խօսքը կը  
 « դնէ . « Ըսկէց առաջ գրածնիս բոլորը  
 « խորհրդածութիւն մըն էր՝ որ մարդս  
 « բնականապէս չար չէ՛ , այլ մանաւանդ  
 « բարի . որովհետեւ արարչագործեալ է  
 « Մենակարող Արարչէն , որ է ինք  
 « նաբուն բարի : Ապա մարդիկ արտա  
 « քուտ դուրսէն կը ստանան իրենց չա  
 « րութեան զաղափարները՝ կամ չար  
 « մարդիկներու հետ տեսութիւն ընե  
 « լով , և կամ չար խօսքեր լսելով և  
 « չար գործքեր տեսնալով՝ կը հակամիտի  
 « ինքն ալ անոնց յարմարել . կայլայլէ  
 « իրեն բնութեամբ բարի ըլլալը . և այ  
 « նուհետեւ կ'ըլլայ բարի մարդը չարա  
 « գործ և մոլի » ( եր . 145 ) : — Այս  
 « խօսքերուն մէջ՝ թէ՛ որ Աեղազեան հե  
 « րետիկոսութեան հոտ մը կառնէ , աս  
 « պիտի ըլլայ , որ Սրբազանը կըսէ թէ  
 « մարդս ՚ի բնէ բարի է , և երկրորդ՝ Սրբ  
 « բազանը մեղքը անկեալ բնութեան չք

տար , այլ 'ի բնէ բարի էակի մը ազատ  
կամացը կուտայ . որոնց վրայ քիչ մը  
վերը խօսեցանք , և որ Պերլազեան հե-  
րետիկոսութիւն չէր :

Եսկէ ետքը՝ նոյն 29 երեսին մէջ  
“Նորին Սրբազնութեան 146 երեսէն բա-  
նի մը խօսք կը բերէ . յորում նախըն-  
թաց շնորհքը չը յիշուիր . բայց միայն  
յետ այնորիկ և վասն այնորիկ շնորհքը կը յիշ-  
ուի . ուստի անտարակոյս՝ աս հետեւու-  
թիւնը կը հանէ թէ Սրբազանը առանց  
շնորհաց փրկութիւն կը բարոզէ . զոր  
քիչ մը վերը ցուցուցինք յայտնի՝ որ  
զուտ զրպարտութիւն է :

Հուսկ յետոյ՝ 30 երեսին մէջ կ'ը-  
սէ . “ կը կարդոնք (Մատթէոս Ե.բք-  
” եպիսկոպոսին) 262 երորդ երեսին վը-  
” րայ : Եպաբէն բնական օրէնքի լու-  
” սով զգօնացեալ շատ բարի մարդիկ  
” կը գտնուին աշխարհի մէջ , կը տես-  
” նաս որ հաւատարիմ են բարեկամու-  
” թեան և պաշտպան ազգասիրութեան  
” և եղբայրսիրութեան կանոններուն , և  
” պատրաստ են միշտ քաջութեամբ  
” յայտնելու ընկերութեան և ազգայ-  
” նութեան ազնիւ սիրոյն պարտաւորու-  
” թիւնը գործով և արդեամբ . կը տես-

« Ես ս որ համեատ և բարի վարք ունին ,  
 « և անկեղծ սիրով հասարակութեանը  
 « բարերար և օգտամատոյց կը հանդի-  
 « սանան , առատաձեռնութեամբ մխի-  
 « թարիչ կըլլան աղքատաց , բարե-  
 « կըրթութեամբ խոհական և քաջալա-  
 « տանուտէր եղած են և բարեկարգող  
 « գերզատանի իւրեանց : Ե՛հա ասանկ  
 « բնական լաւութիւն և բարեմոյն բնա-  
 « ւորութիւն ունեցողները կանուանին  
 « բարի մարդիկ աշխարհի . որ միայն  
 « բնական օրինաց առաջնորդութեամբը  
 « բարի վարուց մէջ կը գտնուին » (Նը-  
 « ումի . Բ . 14) : « Եսիկայ անանկ ահ-  
 « ներեւ վարդապետաբանութիւն մըն է  
 « մարդուս բնական վիճակին նկատմամբ  
 « որ՝ թէ Բրիսթլի և թէ Չանինկ և  
 « Երիտասկան , Սոկինեան , Միադաւան  
 « եան կամ Իւնիվէրսիտիտեան այժմեան  
 « արանդապետներէն ո՛չ ոք ասկէ աւե-  
 « լի կը շողակրատեն : Եման Պեղազիս  
 « սի՛ մեր հեղինակն ալ Սոկրատեսը  
 « մէջ կը քշէ՛ իբրեւ ապացոյց մը թէ  
 « ազ անձը ՚ի բնէ բարի եղած ըլլայ .  
 « տե՛ս երես , 264—269 : Երդ Հայոց  
 « Եկեղեցին կրնուունի առաջին արժո-  
 « րդիւնները , (Ե՛ր՝ ժողովները . Բաղկե-

„ դո՞ւնն ալ մէկտեղ, սրբէ՛ աչքդ Մ. դ.  
 „ նիւ, տեսութեանդ կամ թուարանու.  
 „ թեան սկզբունքներուդ մէջ չը սխա.  
 „ լիս. . . ) որոնց երրորդն է Նփեսոսի  
 „ ընդհանրական ժողովը, որ եղաւ յա.  
 „ մի 431 ին նզովելու և դատապարտե.  
 „ լու Մ. ընտր և յատկապէս Նեստորն.  
 „ ու Պեղազիոսը: Ի՞նչպէս կրնայ ըլ.  
 „ լալ որ աս գրքին հեղինակը՝ Մատ.  
 „ թէոս Մ. ըրքեպիսկոպոսը այնքան նա.  
 „ խանձայուզութեամբ պաշտպանէ՛ ան.  
 „ նոյն ժողովոյն վճիռները, և ասան.  
 „ կով՝ յանդգաստից դատապարտէ և  
 „ նզովէ զնոյն ինքն Մ. ըրքեպիս.  
 „ կոպոսը՝ յանուն Պեղազիոսի: Գարձ.  
 „ եալ և Պօլտոյ Պատրիարքը ի՞նչ.  
 „ պէս վաւերացուց անանկ գրքի մը հը.  
 „ լատարակութիւնը” . . . (եր. 30-39):

Աւասիկ մեր մասանց թուարկութիւ.  
 նը լմնցաւ. որ իւր գրքուկին 18-31 ե.  
 ըեսներուն քննութիւնը կը բովանդակէ.  
 յորա՛ Նորին Սրբազնութեան Պեղազեան  
 ըլլալը հաստատելու համար յառաջ բե.  
 լած ապացոյցներուն բ՞արձ ալ հանդա.  
 նակուած են: Հիմայ դանք իւր այս վեր.  
 ջին կտորը մէյմը աչքէ անցնելու, որով  
 իւր մասանց թուարկութիւնն ալ լմա՞ն

է՛ թէ անկատար, յայտնի տեսնամք :

Մ. Բաղդատ . հակառակորդը՝ Սորին Արքեպիսկոպոստոսն Պեղազեան զըպարտած ատենը՝ անտարակո՛յս աններելի անղգուշութեամբ՝ իւր իսկ զինքը կ'ամբաստանէ Պեղազեան . աս ալ նոր տեսակ տըրամարանութիւն մըն է , յաղթեմ հակառակորդիս տէ՛ ի՛նչ կըլլայ նէ ըլլայ . հէլէ հեղ մը յաղթեմ տէ՛ հերիտիկոս սեպուիմ : Աւ յի՛րաւի . հերետիկոսութիւն է՛յ հերետիկոսութիւն տէյի յար զըպարտող շաղակրատի մը համար՝ շատ ճշմարիտ պատճառներ ունիմք հաւատալու , որ է՛ն մեծ հերետիկոսութիւնն ինքն չուսնայ . . . :

Անշուշտ կը յիշէք որ վերերը հակառակորդին տետրակէն քաղուածք մը ըրած ատեննիս Պեղազեան հերետիկոսութեան վրայօք , աս ալ ըսուած էր , թէ « Պեղազեանք հարկաւորապէս մեկդի ճրգեցին Ս . Օգոստինոսի որոշումը հեթանոսական առաքինութեան նկատմամբ , որ իրեն նպատակ ունի անհատից կամ ընկերական երջանկութիւնը , և Աւետարանական առաքինութեան նկատմամբ , որ է « Հողոյն պտուղը » . և որուն վախճանն է Ա .

Կողմնորդի փառքը և հոգևոց փրկութիւնը  
 նրա՝ Տաղաւին լսէ « Պեղազիւոս քրն-  
 նութեան չառաւ . այլ ծաղրաբանու-  
 թեամբ աչքէ ծածկել ուզեց ան երե-  
 նելի և կարեւոր որոշմանով , և գոհ եղաւ  
 պատասխանել թէ՛ հեթանոսաց ա-  
 աքինութիւնը թէ որ առաքինու-  
 թիւն չէ . ապա ուրեմն իրենց աչքէ  
 քրն ալ աչք չեն . և մարմիննին մար-  
 մին չէ՛ , և էակութիւննին չէակու-  
 թիւն է » ( եր . 15 ) : — Իսկ արդ՛  
 Նորին Սրբազնութիւնը հեթանոսական  
 առաքինութիւնը յիշելով՝ Օգոստինոսի  
 պէս՝ ընդդէմ Պելագիոսի՝ որոշմունք մը կ'ը-  
 նէ անոնց ոչ փրկարար առաքինութեա-  
 նը ու բրիստոնէական փրկարար առա-  
 քինութեան մէջ . առջինը կը կոչէ բա-  
 բելաոսիւն ըստ աշխարհի . ( կամ՝ բարե մարդիկ  
 աշխարհի ) . և միւսը՝ բարեւաոսիւն ըստ Ես-  
 սոսի . ( կամ բարե մարդ Եսոսոսի . եր .  
 270 ) : Եւ կը յաւելու . « Իխտենք՝ որ  
 քարոյական գիտութիւնը մարդս ըստ  
 աշխարհի քաղաքավար և ազնուական  
 բարե մարդ կրնէ . բայց հոգւոյն երջանկու-  
 թիւնը կարող չէ՛ որաւ » ( եր . 270 ) :  
 Երկու անցի այս խօսքիս վրայէն բա-  
 րեկամ . շրկու . աճապարէ՛ . Սրբազանը

Պեղաբնոյն հակառակ կրօնէ, թէ բնական աւ  
 աւաքինութեամբ մարդ չը կրնար փրկու  
 իլ: ուստի և Պեղաբնոյն հակառակ բնական ա  
 ստիճաններն և շնորհական Եստրատային առաքի  
 նութիւնն տէրի՝ աւաքինութեանց երկու  
 որոշմունք կընէ: Հիմայ դուն՝ Պեղազի  
 ոսի հետ մէկ տեղ քսէ՝ թէ աւաքինու  
 թիւններուն մէջ ատանկ երեւելի որոշ  
 մունք չը կայ, ու եզական հակասու  
 թեամբ մ'ալ երկրորդէ՝ թէ բնական  
 աւաքինութեան գոյութիւնը Պեղազեան  
 դրութիւն է: — Երդեօք Մատթէոս՝ Պե  
 ղազեան կըլլայ կոր՝ ըստ սրբոյն ( )  
 զոստինոսի՝ ընդդէմ Պեղազեայ՝ աւաքինու  
 թեանց « երեւելի ու կարեւոր որոշմունք  
 » բը » ընելովը, չէ նէ դուն Պեղազեան  
 կըլլաս կոր՝ ընդդէմ սրբոյն Օգոստինոսի՝  
 նման Պեղազեայ՝ խտրութիւն չընելով կամ  
 չընել երեւնալովդ աւաքինութեանց այս  
 « երեւելի և կարեւոր » կոչած որոշ  
 մունքին մէջ: Մատթէոս՝ հակառակ Պեղա  
 զիոսի և համայն Օգոստինոսի՝ ինչպէս  
 տեսանք, դուն՝ հակառակ Մատթէոսի  
 ապա և Օգոստինոսի, Մատթէոսի և  
 Օգոստինոսի հակառակելովդ՝ ուղղա  
 փառութիւնը չէ նէ Պեղազեան երիցս  
 նզովեալ՝ դրութիւնը բարոզած կըլլաս:

Բսէ՛, մ'ամչնադ . իրաւ՛ Պեղազեա՞ն ես  
 դուն . ուրեմն յաւէ՛տ դուն գրեզ գինքդ  
 կը նզովես՝ յանուն Պեղազիոսի բու չա-  
 րանիւթ գրքուկիդ մէջ, և ո՛չ զՄատթէ-  
 ոս նմանաճայնն Օգոստինեայ :

Ես ալ իրա՛ւ է, որ Արքազանը՛ ինչ-  
 պէս կ'ըսես՝ Պեղազիոսի նման Սոկրա-  
 տեսը մէջ բշտ է . բայց ի՛նչ է ըսեր .  
 Պեղազիոսի պէս՝ Սոկրատէս իր բնական  
 բարութեամբը կրնա՞ր փրկուիլ ըսեր է .  
 չէ նէ պարզապէս բնական բարութեամբ  
 առաքինութեամբ զարդարուած մարդ  
 մըն էր Սոկրատ տէ՛ր օրինակ բերեր ,  
 ու յաւելցուցեր է՝ ինչպէս ցուցուցինք ,  
 թէ բնական բարութեանը՝ բնական առաքինութեանը  
 մարդը չը փրկէր : Աւրեմն Պեղազեա՞ն է  
 Մատթէոս՝ . . . :

Հո՞ւ ալ անհորոք մասանց լեռաբխան  
 իմաստակութիւն . այս ի՛նչտար սիրելի  
 է քեզի սա իմաստակութիւնը : Ինչո՞ւ  
 համար Հայրապետին զՍոկրատ ըստ Պե-  
 ղազիոսի մէջ քշած զրպարտած ատենդ՝  
 անկէ քիչ մը ետքը բնական առաքինու-  
 թեամբ փրկուելու անխելութեանը (որ բա-  
 ցէ ՚ի բաց ըսեր է) մէջ չես բերեր . որ-  
 պէս զի՛ զրպարտութիւնդ ծածկէ՞ս . սու-  
 տըդ խարդախութիւնդ կը լեցրնի՞ս , ու

ըսես որ Նորին Արքայուն թիւնն ալ ըստ  
 բոյժ բարոզութեան՝ չար մարդ ու չար սրբա-  
 րանէն մըն է . ինչո՞ւ . փո՞ւշ է եղեր ին-  
 թը քու աչքիդ . որ ադ զըստարտութիւնը  
 կ'ընես յաճախ չարամիտ նենդաւոր սուտ  
 զրուցութեամբ . ըստ քեզ դատեցայց .  
 եթէ « ասիկայ անանկ յանցանք մըն է՝  
 » որ . . . (զգործողը) կը դատաւարտէ  
 » վատահամբաւութեան , եթէ ամբաս-  
 » տանութիւնը ստոյգ ելլէ . իսկ եթէ  
 » ամբաստանութիւնը սուտ ելլէ , կրկնա-  
 » կի զորութեամբ ամբաստանողին վրայ  
 » կը դառնայ » (եր. 40) : (Վստ ուրեմն  
 վարձք տէ՛րի քու աներես սուտ զըզար-  
 տութեանդ վատահամբաւութիւնը կ'ու-  
 նենաս՝ քանի որ զըստարտիչ ես սրբոց  
 պաշտօնէից Վմենասրբոյն Վստուծոյ , և  
 այդ չարախօսութիւնը քանի որ քու բե-  
 րանդ կը գտնուի՝ վատութեան բանասար-  
 կուին անունը քու ճակտիդ վրայ յաւի-  
 տենական անջնջելի կնիք մը պիտի մնայ .  
 (Յայտ. ԺԻ. 10—12) : — Վս քու կանգ-  
 նած աշտարակդ է . յանցանքը իմն չէ ,  
 քո՛ւկդ է . հիմը բորեցիր նէ՝ գլխուդ փը-  
 լաւ ջախջախեցար . և հիմայ՝ անոր փը-  
 լատակներուն տակ գնայ աղէկ մը ապաշ-  
 խարէ՝ զղջայ՝ ո՛րչափ է կուզես . երա-

նի՛ էր քեզի՛ թէ որ բորած փոսդ շատ  
խորունկ չըլլար :

Բայց կեցի՛ր , իյնալուդ վրայ մի՛ վը-  
հատիր . Հայրապետը Պեղազեան ցու-  
ցունե՛լ հնարելուդ քաջութիւնը մի՛  
ձգեր . վայրիկ մը ևս քա՛ջ եղիր . ու  
ես քու ձեռնարկութեանդ մասունքը թը-  
ւեմ . որ վերի իմ ամբաստանած իմաս-  
տակութիւնդ յայտնի տեսնաս :

Ըստ քեզ՝ պիտի ապացուցանէիր թէ  
Մատթէոս Պեղազեան է . քանզի Պեղա-  
զիտի յարեւման կուսուցանէ , թէ

- 1<sup>o</sup>. Մարդս ՚ի բնէ բարի է .
- 2<sup>o</sup>. Եղամայ մեղքը իրեն սեպհական  
ուած էր .
- 3<sup>o</sup>. Սկզբնական մեղք չը կայ .
- 4<sup>o</sup>. Եւանց շնորհաց դործակցութեան .
- 5<sup>o</sup>. Եղատ կամօք կը փրկուի մարդ .
- 6<sup>o</sup>. Շնորհքը ամեն մարդկանց հար-  
կաւոր չէ՛ .
- 7<sup>o</sup>. Մուրք ( ) գոստինոսի ըրած առա-  
քինութեանց երևելի ու կարեւոր որոշ-  
մունքը հարկաւորատէս մէկդի կը ձգէ .
- 8<sup>o</sup>. Կը մերժէ կուրանայ Քրիստոսի  
Ըստուածութիւնը , և կը դաւանի արա-  
րած .
- 9<sup>o</sup>. կուրանայ յաւիտենական պատժոց  
վարդապետութիւնը .

10<sup>o</sup>. Կը դաւանի թէ մարդ ՚ի բնէ  
բարի ըլլալով չունի կարօտութիւն քա-  
ւութեան :

11<sup>o</sup>. Կը սուրբ հոգիով վերակենդա-  
նութեան :

12<sup>o</sup>. Կը թէ հեթանոսը բնական լու-  
սով կրնայ փրկուիլ :

Եսոնցմէ ո՞րը ապացուցանել կրցար՝  
բա՛րեկամ, առջի՞նք : ադ իրա՛ւ է, հաւ-  
նաւոր հոգի առնելով այդ կարճ խօսքը,  
որ չը գիտցող չե՛ս կրնար ըլլալ իմաս-  
տունդ :

Ի բնէ բարի խօսքը՝ Պեղազեանի մը բե-  
րանը ուրիշ նշանակութիւն ունի . ուղ-  
ղափառի մը բերանը՝ ուրիշ . ինչպէս  
նաև շնորհ, Քրիստոս, առաքինութիւն և՛ բա-  
ուերը : Պեղազեան մը բարի բառը իւր ա-  
մենէն ընդարձակ մտօքը կ'առնէ կը գոր-  
ծածէ . իբր թէ՛ հոգևոր շնորհական ու  
մարմնաւոր բարին չը խտրելով, ինչպէս  
առաքինութեանց բնականը և գերբնա-  
կանը : Ուղղափառ մը աս մտօք բարի  
չըսեր մարդոյն . զի « չի՞ք ոք բարի » :  
Շնորհական գերբնական բարութեան  
ստուերն անգամ չը տեսնար մարմնաւոր  
բնական բարւոյն մէջ . Եւկտարանական  
հաւատոց, վերածննդեան նորոգութեան

և այլն բարութեան արհեստը կամ ճասը  
 բարի ըսուած էակի մը բունին՝ ծագման  
 նը ու խառնուածքին մէջ չխանար :  
 Ինչպէս մինչև հիմայ զընցած խօսքե-  
 ռովն իսկ Արքայութեան խօս-  
 քերովը կրցանք ցուցունել, որ ինքն ալ  
 այս բարութիւնը ըստ Արքայութի չէ՝  
 ըստ ուղղափառութեան կիմանայ ու կը  
 բարոյէ : պարզապէս բնական բարու-  
 թիւն մը՝ (խիստ անձուկ սահմանի մէջ  
 ամփոփուած) յորում Արարչին գործակա-  
 ւէ՛ի շնորհս իւրում պատկերի և նմա-  
 նութեան՝ տրամադրութիւնք բնական օ-  
 րինաց ՚ի դիմել առ բարին : յորս թէ  
 շնորհքն իրական չաւելնայ ՚ի թիկունս՝ որ  
 անհնար է բացարկապէս, չը կրնար դիմել  
 առ գերազոյն բարին . . . : Աւ փանորոյ՝  
 Հայոց Ակեղեցին տիրապէս բարեգոր-  
 ծութիւն չը համարիր այն առաքինական  
 գործքերը՝ որ Արքայութի վիճակի մէջ և  
 կամ շնորհօք չը գործուածի պէս կերե-  
 նան : ուստի և արձակման աղօթքին մէջ  
 կ'ըսէ ապաշխարողին. « և դարձեալ տամ  
 » զքեզ ՚ի խորհուրդս Սուրբ Ակեղեց-  
 » ւոյ : զի զըր ինչ գործիցես բարեա՛ւ ելեցի  
 » ՚ի քեզ ՚ի բարեգործութեան և այլն » :  
 Հա՛. անանկ է սէհո՛ս ալ իմաստա-

կուլթիւն , հո'ս ալ խաբէուլթիւն խապ-  
 դախուլթիւն կ'ընես . երկու իմաստանոսիւնոց  
 խառնուարիչն մէկ ուղիղ խօսք մը թիւրե-  
 լու կը գործածես : Մէյմը՝ հոմանունոսիւն  
 հոմայայնոսիւն խաբէուլթիւն , որ երկու  
 քին բերանն ալ նոյն բառերը տեսնալո-  
 վըզ կը խորամանկես . մէյմ՝ ալ յաս-  
 ցելոյն պայմանաբար կամ անհոմանաբար առասպելաւն  
 արշակաբար իմաստակուլթիւն : որով Նորին  
 Սրբապնուլթեան խիտ նեղ սահմանա-  
 անձուկ մտօք և սրայմանելով ըսած բա-  
 րին՝ Պեղազիոսի արձակաբար էն խիտ  
 ընդարձակ մտօք՝ անպայման ըսած բար-  
 ւոյն տեղ կը դնես նենգամտուլթեամբ :  
 Եւ ասոնց վրայ՝ հա՛ երրորդ իմաստա-  
 կուլթիւն մըն ալ , ոչ պայման իբր պայման  
 վրայ կը յաւելուս , իբր թէ մըցելով թէ  
 կա՞ մի բեզի սէս վարպետորդի նեն-  
 գաւոր մ'ալ՝ որ կարենայ այսչափ խիտ  
 և հոծ իմաստակուլթիւններ կուտել հա-  
 մաբարդէլ ինչպէս դուն պսակ կը յա-  
 շելուս այս երրորդ իմաստակուլթիւնդ  
 առջիններուն . որով Հայրապետին ուղ-  
 դակա յօղուածները՝ իբր պատճառ ա-  
 պացոյց զբարստած մոլորութեանդ մէջ  
 կը բերես : Ուրեմն աս էն առջի հիմը  
 սկզբունքն ալ Սրբազանը Պեղազեանին

հակառակ մտօքն է ըսելը :  
 2<sup>o</sup>. 3<sup>o</sup>. 4<sup>o</sup>. 5<sup>o</sup>. և 6<sup>o</sup>. ալ ո՛չ միայն Արք-  
 բաղանք չէ՛ քարոզելը . այլ և հակառա-  
 կըն է ուսուցելը , ինչպէս տեսանք . 7<sup>o</sup>. ը՛  
 առաքինութեանց կարևոր որոշմունքը՝  
 Արքազանք բոլորովիմբ կրնդունել ընդ-  
 դէմ Պեղազեայ . հակառակորդը՝ կեր-  
 պով մը կը միաբանի մոլորութեանս :  
 8<sup>o</sup>. 9<sup>o</sup>. 10<sup>o</sup>. 11<sup>o</sup>. և 12<sup>o</sup>. ը՛ բոլորովին չապա-  
 ցուցանելը , խաւարիւնեան մասանց մէջ չը դը-  
 նելը բնաւ . ուրեմն անկարար : խաւարիւնեան  
 մասանց իմաստակութեամբ՝ խաբէութեամբ  
 միայն՝ Սորին Արքազնութեան ամբիծ ա-  
 նունը կը հնարի աղտոտել . (ինչպէս որ  
 ամբաստանեցիինք) . չը յաջողելը նէ՛ յան-  
 ցանքը որի՞նն է : չար մարդոյն . և ո-  
 ղովհեակ չար եմ տէ յի կը հաստատէ ,  
 ասկէց աւելի քրէական յանցանքներ ալ  
 ընդդէմ հաւատոյ՝ կը յուսացուի իրմէն .  
 և ամօթ չէ . Եստուծմէ չը վախցողը՝  
 մարդէ ալ չամչնար : — Ենչուշտ գի-  
 տէր որ 8<sup>o</sup>. ը՛ Սորին Արքազնութիւնը չէր  
 քարոզելը , թէ Քրիստոս Եստուած չէ ,  
 ինչպէս կը հայհոյեն Պեղազեանք : 9<sup>o</sup>. ը՛  
 վեր վար կը յեղ յեղէր հազար անգամ  
 յաւիտենական վարձք և պատիժ ըսելով :  
 10<sup>o</sup>. ին և 11<sup>o</sup>. ին դէմ մարդս արտանց Կառու-

Նետն արանց ստարք հոգւոյն վերաճնորեան և  
 կրնար քրիստի տեյն շատ անդ ալ կրկներ վե-  
 րակրկներ էր: 12. և ուսկ յետոյ իր խօս-  
 քովը ըսեմք, « Ենկեղծ Պեղադեան մը  
 » աներկիւղութեամբ պէտք է դաւանի  
 » թէ մարդ ՚ի բնէ բարի ըլլալով՝ չունի  
 » կարօտութիւն քաւութեան և սուրբ  
 » և ոգիով վերակենդանութեան, և թէ  
 » հե՛նանոսը կրնայ քրիստի բնական յոսով կամ իւ-  
 » բնանով, ինչպէս որ Քրիստոնեան՝ Եւե-  
 » տարանով, » (եր. 18): Տարակոյս չու-  
 նիմք՝ որ անկեղծ հակառակորդը՝ Աորին  
 Սրբազնութեան զրքին մէջ իւր չորս  
 աչքովն ալ չէ կրցեր այս օրինակ մտլո-  
 ըութիւն մը դտնել. ուր ՚ի բնէ բարի և  
 սած Քողորքականին անգամ իւ շտնայ այն  
 քրիստիանը՝ զոր անկեղծ Պեղադեան մը  
 հեթանոսին կը շնորհէ եղեր: Եսոր հան-  
 դուրծելու էր ՚ի բնէ չար եմ ըսող հակա-  
 ռակորդը, տանելու էր, ու չէ թէ հա-  
 կաստ-նեամբ ու բիւր մը մտլորութեամբք  
 իմաստակութեամբք նենգելու՝ թէ Պեղա-  
 դեան՝ է և այրապետը. զի Պեղադեան  
 հերետիկոսութիւն կ'ուսուցանէ:

Բարեկամ, արդեօք պիտի դարմա-  
 նաս ու շատ մըն ալ պիտի ամենաս  
 (թէպէտ ար չեմ սպասեր քեզմէ), որ

,, աղիտուլթեան և ստուլթեան ( եւս եւ  
 ,, իմաստակուլթեան խարէուլթեան ) այս  
 ,, պիտի քաւասունն երեսնոց խառնուրդ  
 ,, մը կարդալու Բարեբաղդուհի և ո՛չ  
 ,, մէկ զրքի մը վերծանուլթեանը մէջ  
 ,, պատահած էր մեզի ,, ( քու խօսքդ  
 է աս , եր . 87—88 . անշո՛ւշտ քու գրք  
 քիդ համար մարգարէաց եր ու անոր ար  
 ճագանքը հինոց կը լսես ) : Ա՛ր մէկը  
 թուեմ . ես քու իմաստակուլթիւններդ  
 երեւան հանելէն ( ճանճրացայ ու անտա  
 նելի զղուանք եկաւ վրաս , ընթերցողէն  
 ալ ասկէց աւելի բան չեմ յուսար : Եւս  
 չափ ալ իմաստակուլթեանց մէջ պա  
 րանոցաթող թաթխուի՛լ , այսչափ ալ  
 խարէուլթիւններ խարդախուլթիւններ  
 խուկել իրարու վրայ՝ մըջնոց դեռալուն  
 չա՛փ : Եւ ինչո՛ւ համար . որպէս զի կա  
 րող ըլլաս Սատթեոսը Պեղագեան է ը  
 սել : Ինչո՛ւ՝ ա՛յր Թշնամուլթեան , « աչ  
 ,, քիդ փո՛ւշ է եղեր . . . » :  
 Ե՛ւ լուէ՛ . մի՛ յոգնիր՝ հասկըցայ .  
 կուզես գործնականապէս փորձը Վրաց  
 ցուցունել առաջարկուլթեանդ , թէ հար  
 քը՝ է բնէ լար է . և թէ՛ ինչո՛ւ Սրբադա  
 նը քեզի բարե ըսէ : Ար թողում արդ՝ ըզ  
 քեզ՝ քու շինած աշտարակիդ փլատակ

ներուն ասկ զղջութեան սիրտ բերելու  
 ասպաշխարհելու և չես կրնար « վատա-  
 » համբաւութիւնը » (քու բառդ է աս-  
 եր . 40) քու անունիդ վրայէն ջնջել  
 մինչեւ որ « ՚ի սրտէ ասպաշխարհութեամբ  
 » և խոնարհական խոստովանութեամբ »  
 (եր . 42) ուղղափառ չք բարոզես յայսմ  
 ըստ ճշմարտունի՝ զՏԵՐ ՏԵՐ ՄԵՏԹԻ-  
 ՈՍ ԵՌԷՐ ԵՒ ԵՊԵՏԻՒ ՍՐԲԵՔՆ  
 ԵՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆ, ԿԵԹՈՊ ԻՅՈՒ-  
 ՄԸՆ ԵՒ ԾԵՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐՒ-  
 ԵՐՔՆ ԵՄԵՆՆՅՆ ՀԵՅՈՅ, զերժ  
 բոլորովմբ ՚ի Պեղաղեան հերեւիկոսու-  
 թենէ կամ ճայնակցութենէ : Բանզե  
 թէպէտ դուն ՚ի բնէ լար եմ կրեսս բայց մենք  
 կը հաւատանք որ ՚ի բնէ բարե ես բարւոյն տը-  
 ըամաղրութիւնը կայ քու մէջդ . որում  
 թէ չք հետես գործակից շնորհաց հես-  
 տելով՝ կրնաս Երթմբ զղջալ ասպաշա-  
 շել սրտիւք և դառնալ ըլլալ բարե  
 մարդ և բարի բրիատոնեայ , և զհայ-  
 ըսպեան բարոզել ուղղափառ՝ ոչ Պե-  
 ղաղեան :

Աղջոյն ուրեմն Հայրդ հասարակաց  
 ողջոյն է քեզ՝ Տէրդ Մատթէոս , սըբ-  
 եա՛րդ ՚ի Պեղաղեան մոլորութեանց՝ ՚ի  
 շնորհս հակառակորդին . և ողջոյն ընդ

քեզ ընդ Վոր Ըռնդ ուղղափառութեան .  
 . . . Իցի՛ւ թէ ազատ կամացդ վարդապետութեան ուղղափառութիւնն ալ խոստովանելու չափ քարեզութ և անկեղծ ըլլար հակառակորդը , իւր անձնամասն ամբաստանութեանը պէս բորբոսվիմք եղծած չ'ըլլալով իւր 'ի բնէ բարութիւնը :

Վերը ըսինք որ Վորին Սրբազնութեան ազատ կամաց վարդապետութեան վրան ալ մոլորութիւն կը դնէ հակառակորդը , տեղն է որ 'ի համառօտի անոր վրայ ալ խօսինք :

Իր քարոզած ազատ կամաց վարդապետութեան դէմ ըսելիք մը չունիմք , ըստ որում քրիստոնէի մը քրիստոնէաբար դաւանիլ կրցածն է . այլ՝ ազիտաբար՝ Սրբազանին խօսքերը չը հասկնալով իւր ամեն եղբերովը՝ անոնց ծուռ մեկնութիւն ծուռ հետեւութիւն տուած ըլլալուն դէմ պիտի խօսիմք , և քանի մը խօսք :

Հայրապետը 18 երեսին մէջ կ'ըսէ՝  
 թէ Տարդս Բանի-Վարելովի-ր ազատ կամքը Բանն ալ երբեմն պատշաճ Բաղ յանաց խաբուելով կը ներէ կամին , և խոչընդոտութեան կոտորաց զգայուն :  
 ) թեան տեսած ու բռնած առարկային  
 ) համեմատ գործելու ) . բայց բարւոյն

ախորժե լով թերադիր կըլլայ կամաց :

Ես խօսքերէն հակառակորդը թիւր  
հետեւութիւն է հաներ : (Յորում կը  
ներեմ իւր Ֆիլիստիայութեանը՝ արտա-  
քին զգայութեանը՝ ազատ կամաց ՚ի դորժ  
շարժելու շարժառիթներէն մէկն ըլլալը  
ուրանալ ցուցուններուն համար) : Արտէ  
որ Արբազանին քարոզած ազատ կամաց մե-  
քենական ազատութիւն է . ինչու որ (ան-  
շո՛ւշտ աս է պատճառը), լաւէ կըսէ ՚ի Բ-  
նէն . (չը շուարի՛ս՝ բա՛րեկամ, բան բա-  
ռէն . իօս+ ըսել չէ՛ . Արբազանին ըսած  
խնայականութեան գերազոյն լոյսն ու  
դատողական իշխանական կարողութիւնն  
է) . ինչու որ « չար բան մը տեսածին  
» պէս կամ լսածի՛ն պէս անմիջապէս  
» չար կըլլայ անդխնադրելի հարկաւո-  
» լութեամբ մը . և եթէ լսէ կամ տես-  
» նայ բարի բան մը, նովին հարկաւո-  
» լութեամբ բարի կըլլայ : Կը ջնջէ  
» բոլոր կամքի ազատութիւնը, որով  
» այնքան կը պարծի հեղինակը : Բայ  
» իր Աստուածաբանութեան՝ կամքը հար-  
» կաւորութեան մը կը մղուի, որկէ անկախ  
» է որչափ երկանաքար մը ազատ է »  
(27—28) :

«Ասխ սուտ է աս . Հայրապետը ը-

սած չէ թէ « մարդ չար բան մը տեսաւ ,  
 ,, ծին պէս կամ լսածին պէս անմիջաւ  
 ,, պէս չար կըլլայ անդիմադրելի հար  
 ,, կաւորութեամբ մը ,, . ասոր մօտ խօս  
 ուածք մըն ալ չունի , անանկ երկդիմի  
 խօսուածք մըն ալ ըսած չունի որ աս  
 հետեւութիւնը առաջ գայ : (Թէ որ ը  
 սած մը ունի նէ՛ աս է թէ (ինչպէս ին  
 քըն ալ օրինակեր է իւր 26 երեսին մէջ) ,  
 “ . . . Երբեմն զգայական չար բաղձանաց  
 ,, գաղափարներով կը շփոթի և կայլայ  
 ,, լի և կաղօտանայ իմացականութեան  
 ,, զօրութիւնը ուղիղ և ճշմարիտ դա  
 ,, տումն ընելէն , և կամքին (երբեմն , ըստ  
 ,, պատահման) Բոյլտոտոմիւն հոգաց զգա  
 ,, յութեանը տեսած ու բռնած առար  
 ,, կային համեմատ գործելու ,, : — Մար  
 դըս ամեն տեսած չար ու բարիին պէս  
 անմիջապէս չար ու բարի կըլլայ չքեր  
 անդիմադրելի հարկաւորութեամբ , այլ  
 քան իւր իւր գիտման 'ի գործ . և 'ի նմին'  
 երբեմն բարւոյն և երբեմն չարին՝ ըստ  
 ազատ խորհրդոյն՝ կը թելադրէ գիտման .  
 արտաքին աղբիւրներէն կամքը 'ի բարի  
 կամ 'ի չար իւր հոգացման չքեր ենթակոյս  
 պէս , անդիմադրելի հարկաւորութեամբ ,  
 այլ բա՛նը Բոյլտոտոմիւն կուտայ կըսէ

կամաց գործերու :  
 « Ետեւաբար » կամքը հարկաւորու  
 « Թե՛նէ կը մղուի » ըսելը « Եթէ արտա-  
 քին զդայու թեանց տպաւորութեանն իր-  
 րեւ » Ի բնադրուող հարկաւորութեանն կը հըն-  
 մաքով կըսէ նէ, սեւադէմ սուտ մըն է  
 աղ. Հայրապետին զործ.քին և աղ խօս-  
 քերուն մէջ բնաւ աղ իմաստը չը կայ :  
 Իսկ թէ որ ՚ի բանին թելադրութեանն  
 իրրեւ ՚ի հարկաւորութեանն կը հըն-  
 մաքով կըսէ, զոր չեմ կարծեր. և ասկէ հետե-  
 ցընելով կամքը բանին մեքենական ճա-  
 ւայ եղած կըսէ նէ՝ ինդալէն եւեւ զու-  
 թեքնիս կը շարժէ իւր բանավարութեա-  
 նը վրայ. ըստ որում միտքը դրած կըլ-  
 լայ որ իւր ընթերցողներուն ամենն ալ  
 « Եւ » ընէ, որպէս զի աղատ կամքով  
 (առանց բանավարութեան) շարժին.  
 Ինչպէս անբան անասուններն ալ :  
 Իւր խօսքը ըսենք, « Ես ստոյգ է  
 « որ կամքին աղատութիւնը չեղծանիր »  
 « Եթէ ամենազօրեղ շարժառիթներու  
 « միջոցաւ անգամ անոր վրայ ազդեցու-  
 « թիւն ըլլայ : Եթէ մարդու մը տունը  
 « գիշերը բռնկելու ըլլայ, ու երթաս  
 « ճայն տաս անոր և մերձակայ վտան-  
 « գը իմացընէս իրեն. կատարեալ քաջ

,, գիտես որ պիտի ճգէ փախչի տունէն  
 ,, անյապաղ . և սահայն աս ստոյգ է որ  
 ,, վերջին աստիճան ազատութեամբ կամ  
 ,, քի կելլէ կերթայ ,, (եր . 109) : Մի-  
 կայ համարման մըն է վերի ըսածին .  
 թէպէտ և շատ ալ ճշմարիտ է . վեր-  
 ջին աստիճան ազատութեամբ կը միտի  
 մարդ արտաքին ազդեցութեանց խաբ-  
 ուելու 'ի բանէն . և ասոր համար ահա  
 հակասութիւն է՝ ասոր դէմ՝ կամքը ար-  
 տաքին շարժաւիթներու և կամ բանին  
 թելադրութեանց դերի անազատ ծառայ  
 կըլլայ ըսելը : Ինչո՞ւ անազատ ըլլայ  
 կամքը շարժելով 'ի բանէն , միթէ կամ-  
 քը 'ի մարդ՝ ազատ 'ի բանէն՝ ինքնուրո՞յն  
 շարժի և գործէ երբէք . որ բանիւ վար-  
 եալ անազատ ըլլայ . բանիւ՝ չէնէ ան-  
 կախ 'ի բանէն ազատ կը վարուի կամքը .  
 անբան կամք 'ի մարդն չեմք գիտեր ,  
 բայց եթէ անբան անասնոց մէջ՝ ըստ  
 իմիք . առանց բանի չը սորվեցանք յի-  
 մարին կամքն ալ ու խենթինն ալ . մի-  
 թէ հակառակորդը անա՞նկ ազատու-  
 թիւն մը կը շնորհէ կամաց , որ բնապէս  
 անկարելի է : կամքը ո՞վ ըսաւ երբէք  
 ո՞վ 'ի բան . այլ ինքնուրոյն ազատ . միոյ  
 նշխարհի երկու դեհապետք ո՞վ ասաց

... : — Մեղուն մեղք և օձը թոյն ան նոյն  
 ծաղկէն կը նիւթեն. ինչպէս 'ի բնէ բարի  
 լուսաւորչեանք ճշմարտութիւն և ուղ-  
 զափաւութիւն, և 'ի բնէ չար բրկատոն  
 եան ալ ստութիւն հերետիկոսութիւն,  
 ան նոյն բարե մարդ դրբէն : Հետեւաբար՝  
 և 'ի բնէ բարի Ա. Պօլսոյ Հայ Պատրի-  
 արքը (որ ան ալ երեւելապէս փոշի  
 դած է հակառակորդին աչքին) . կամա-  
 կար հաւանութիւն կուտայ անոր տպեց-  
 ման ու կը գոյէ իսկ զայն ու մինչեւ հի-  
 մայ, 'իմեծ վէրս հակառակորդին . իսկ  
 'ի բնէ չար եմ ըսող հակառակորդը կը  
 նղովէ ու կը դատապարտէ զայն . նղովք  
 մը երկուք ալ իւր գլուխը կուտելով  
 նովիմք զճշմարտութիւնը նղոված դատա-  
 պարտած ըլլալուն համար . . . :

— Գանք հիմայ աւելի մեծ գործքի  
 մը, որ թէպէտ մինչեւ հիմայ 'ի համա-  
 ոճօտի զրուցած ուխտ կատարած լինցու-  
 ցած եմք . բայց պատիւ ընել կուղեմք  
 հակառակորդին բացատրել ու աղէկ մը  
 խելքը տեղ ընել տալ, որ 'Արին Աբը-  
 բազնութեան 'ի բնէ բարեին վարդապե-  
 տութիւնը ու իր 'ի բնէ չարին վարդապե-  
 տութիւնը՝ թէպէտ իրարու ներհակ հա-  
 կասութեամբ՝ միեւնոյն են մտօք . բայց

միայն այլ և այլ գիրով բացատրուած ,  
 և ետքիսին՝ հակառակասիրութեամբ ը  
 թշնամական ոգւով հակառակութեան  
 դուռ բացուած . և վասն ոյոյ՝ իւր ան  
 զուսպ կիրքէն յաշիտակուած՝ ճշմար  
 տութեան ճամբուն մէջ գթած սահած  
 մոլորութեանց մէջ կը սայթաքի :

Հայրապետը իւր գործքին մէջ կը  
 հաստատէ (ինչպէս քիչ մը յաւաջը Ը  
 սինք) , թէ մարդս ՚ի բնէ բարի է : Եւ յ  
 բնէ բարւ թար դայթակրութեան եղեր  
 է իրեն , զոր տգիտութեամբ չը կրնա  
 լով ըմբռնել , որ իւր տրամաբան խել  
 քին մեծ աղո է . նոյն իսկ Հայրապետին  
 ան նոյն դրքին մէջ հերքած վարդապե  
 տութեան տեղ կառնէ . իբր թէ՛ Նորին  
 Արքազնութիւնը բարոզած ըլլաք անանկ  
 բարութեամբ մը ծնած ըլլալ մարդկան՝  
 անով կարող ըլլան փրկուիլ . այս է՝  
 գերբնական բարութեամբ : Եթէ տգի  
 տութեամբ չէ նէ՝ աննեցելի է իրեն . որ  
 թէև գիտութիւն ծախել ուղեւով ասանկ  
 ըրած ըլլայ . ու իլլայ երկայն բարակ  
 շատ մը վկայութիւններ ժողովէ մէջ ձգէ ,  
 որոնց հիջ մէկն ալ Նորին Արքազնու  
 թեան բարոզութեանը հետ վերաբերու  
 թիւն չունին կերպով մը . ասով հակա

և անկութիւն մը և եթ քչել ու իր օրով  
 ոխերիմ քենը հանել ուղած կ'ըլլայ : խաչ  
 դադու թիւն եղած տեղը վայ վայ կանչել  
 լովը ի կռիւն զարհուրանտ սակ չարա  
 գուշակ հաւուսն Աթենայ և բարբառ  
 խարհի և ինկա՛ւ : Հովիւը արդա՛րը  
 գոչելովը : « Ինչո՞ւ լինի : » : « Ինչո՞ւ լինի : » :  
 « Երբին Սրբազնութեան հակառակ  
 կելայ մի քարոզէ : Երբին լինի լայն  
 ինքն միայն չը հասկընար իւր բաժը որ  
 նոյն բանն է . բայց նա կը հասկընամ իւր  
 լեզուն . որ բսել կուզէ և բսել է ալ ,  
 թէ « (այս խօսքս բառ ին Աստուածաբա  
 նական խնամովը չի պիտի հասկնամք  
 թէ մարդս) մարդկային դրանկան օրի  
 նայ դէմ յանցաւ որ դոնորւած է և կամ  
 թէ քարի և օղտակար անդամ մը չէ ըն  
 կելու թեան , » : « Երբին Սրբազնայն օրի »  
 արբ-լինէ և հարգողացուցինէ որ արտիւր ծնած է  
 (եր . 119) : Եւ կ'ըսես դուն քու բերնովը  
 և շատ աղէկ . բայց երբ որ Սրբին Սրբ  
 բազնութիւնը թէ որ հաստատէր թէ 'ե  
 ծննդին 'ե ինչ կան 'ե մարդն ասոնք , ա'ն ասին  
 պարտաւոր է իր անոր դէմ տախկայ հաս  
 տատելու : Ընդ վայր կը յոգնիս բարե  
 կամ . և հոս զիս կը ինդայրնես , որ Սր  
 բին Սրբազնութեան վարդապետութիւնը

հերքեմ ըսելն իբէն՝ Կը հասարակեա անգղու-  
 շութեամբ . թէպէտ և ուրիշ կերպ ը-  
 նել ուղէիք նէ՝ բանականութենէն դուրս  
 ելլալու էիր : Սուտը որչափ և վարպետ  
 ձեակերպութեամբ ըլլայ , անդրէն խօ-  
 սողնն գլուխը կը դառնայ ուժգին ծան-  
 ըութեամբ . ու հիմայ՝ բանի որ ճշմար-  
 տութեան լոյս մը կ'ընդունիս , եկո՛ւր  
 կամակար Երբին Սրբազնութեան հետ  
 միաբանելով . քարոզէ թէ մարդս 'ի բնէ  
 Բարի է ըստ աշխարհի :

Սրբազանը՝ Բարի մարդ և Բարի Իրեօրոնեայ  
 տէրի մեծ որոշմունք մը կ'ընէ . հակա-  
 ուակորդն ալ թէպէտ կը լռէ՝ բայց կը  
 խոստովանի թէ Բարի մարդ ըսելովը՝ Բարի  
 Իրեօրոնեայ ըսել ուղած չէ՝ : Աւնակ՝ մար-  
 դոյս 'ի բնէ բարութեան բովանդակու-  
 թիւնը կը հաստատէ . յայնմ՝ որով մար-  
 դըս կ'ըլլայ ընկերութեան բարի և օգ-  
 տակար անխնաս անդամ և այլն . որով և  
 միով բանիւ անուանի Բարի մարդ աշխարհի .  
 այլ ո՛չ Բարի Իրեօրոնեայ (գլ. Ժ) : — Հա-  
 կաուակորդն ալ աս սոյն բանը հաստա-  
 տելով կըսէ . « Երբ որ մարդու մը հա-  
 » մար վատթարացեալ կամ ապակոնեալ  
 » բնութեան տէր է կ'ըսենք , ըսելէն՝ ապեր-  
 » թէ ան մարդը մարդկային դրական օ-

« րինաց դէմ յանցաւոր դռնուած է, և  
 « կամ թէ բարէ և օգրտիտք անդամ ճշ չէ ընկե-  
 « րուիեան » (Եր. 119) :

Բարի է. ի՞նչ է հապա քու դրած  
 հակառակութիւնդ քու և Նորին Արքադ-  
 նութեան ուսուցմանցը մէջ. որ տարա-  
 պարտ այնչափ ալ կը ճգնիս. սո՛ւտ մար-  
 դարէին բերնէն է եղեր Նորին Խաղա-  
 դութի՛ւն խաղաղութի՛ւն գոչելը, որ է-  
 լեր ինչտար ձայն ունիս նէ կոկորդղ լը-  
 ցած՝ վտա՛նդ, մա՛հ, կորո՛ւտ կը սօ-  
 ւաս : Ես ալ անշո՛ւշտ քու է՛ն մեծ խա-  
 ղաղասիրութեանդ ու ճշմարտասիրու-  
 թեանդ եղական ապացոյցն է տուեր ես :

Բայց որովհետև ինձի օրինակ տուիր,  
 քու մէկ քանի ստուգապէս սխալ խօսքե-  
 րը՝ սկզբունքներդ ալ շնուկեմ :

« Մարդս ԲԵՏԻ Ծ՛ՆԵՆԵՂ ԶԻ :  
 « անիկայ Բ՛ՆԵԿՈՆՈ՛ՊԻՍ ԲԵՏԻ ԶԻ :  
 « անիկայ այնպիսի բնութեամբ մը ծը-  
 « նած է, որ իբրև պատասխանատու  
 « էակ գործել սկսելուն պէս՝ մեղք կը  
 « գործէ և Եսորո՞ւնդ փառքն կը պակսի »  
 (Եր. 124) : Ես խօսքին մէջ կը նշմա-  
 րեմք բնական աշխարհային բարութիւնը  
 ուրացուածի պէս, բայց և այնպէս՝ Ես-  
 րորո՞ւնդ փառք վրան աւելցած. ) յօրմէ

պիտի պակտի՞ մեղքը դործելուն պէս :  
 Եսանկ չէ՞ նէ՞ շնորհքը չը կայ վրան, որ  
 է հերետիկոսութիւն Պեղոպեան . ինչ  
 պէս ինքն ալ կը խոստովանի . Եսանկ  
 փոքրէ՞ կամ նախընթաց և կամ հետևորդ  
 շնորհք պիտի խմանամք . նախընթացը զը  
 բութեամբ կիմացուի տէ՛ ներգործութեամբ  
 զընդունած Եսանկ փոքրէ՞ հետևորդ շը  
 նորհք է՞ նէ՞ հիչ մէկ կերպով բարութիւն  
 չունեցող ենթակայի մը վճայ կը զընդ  
 ուի, որ սուտ է . և զիտեմք՝ որ ուրիշ  
 անգամ հակառակորդը ասանկ չընդունիր :

« Մանկանց մկրտութիւնը անխ  
 » մաստ արարողութիւն մը կըլլայ, և  
 » թէ նոքա սուրբ ծնեալ են . և եթէ  
 » չը կայ այնպիսի բան ինչպէս սկզբնա  
 » կան մեղք . կամ՝ թէ որ չը կայ կա  
 » պակցութիւն մը Եղամայ մեղացն ու  
 » աշխարհի վատթարացեալ վիճակին  
 » մէջ » ( 111\_112 ) :

Թէ որ հակառակորդը առաջարկու  
 թեան ճշմարտութիւնը կընդունի, ինչ  
 պէս մենք կընդունինք, թէ մկրտութիւ  
 նը սկզբնական մեղքը կը սրբէ . հետև  
 լութիւնն ալ ճշմարիտ կընայ ըլլալ . այ  
 սինքն՝ թէ մանկունք սուրբ ծնեալ չեն  
 ՚ի սկզբնական մեղաց, մկրտութեամբ կը

արբուին . Ինչպէս կը բարողեն Հայք :  
 Եւսկ եթէ չընդունիր՝ ուրեմն արամաբան  
 ներուն առ մարդ պարճաբանել անուն տու  
 ած իմաստակութեամբ կը զեղծանի :

124—125 երեսներուն մէջտողոյ միտ  
 ուրնին բացուելուն պէս չարին ունե  
 ցած հակամիտութիւննին երեւան հա  
 նելինն օրինակ և հաստատութիւն կառ  
 նէ անոնց չար ծնունդ ըլլալուն : Եւս  
 սոյն բանը ո՞չ ապաքէն իւր վրայ ալ  
 կընար շրջել հակառակորդը . Ինչո՞ւ  
 չը հաճիր շրջահայեաց տեսութեամբ մըն  
 ալ ԲՈՒՍ՝ տողոյ՝ առածի կարգ անցած  
 այն մեծ արդարասիրութենէն աղէկն ա  
 խորժեղնէն հաստատութիւն չառնելու ա  
 նոնց բնականապէս բարի ծնած ըլլալ  
 նուն : Ա՞չ ապաքէն ասով պիտի իմա  
 նամք թէ անոնց ներսիզնին 'ի բնէ 'ի  
 ծննդենէ է սէր բարւոյն ( ո՞չ Եստուա  
 ծարանականի ) : Ա՞վ սորվեցուց անոնց  
 աղէկը սիրել , ու գէշն ալ՝ ըստ իւր  
 եանց տեսութեան՝ բարիի երեւոյթով  
 ճանչնալ ու գործել : Տղայ մը՝ հար  
 կաւ չուրացուիր , հի՛չ մեղք մը մեղք  
 տէ՛յի գործած չունի , աղէկ բանի մը  
 պէս կը գործէ , որ եզրական վկայութիւն  
 մըն է իրաց , որոնցմով կը հաստատուի :

Թէ մարդս Թէպէտ՝ի բնէ բարի է, (բարի՞  
 ո՛չ աստուածաբանօրէն մտածեալ), այլ  
 մտեալ է՝ի չարն . Թէպէտ իր բու-  
 նին կամբը բարի է . այլ դործը՝ չուղած  
 չախորժածն է՝ չար, ըստ Աւարեւոյն :  
 Ի բնէ լաւ մը բարի կամենալը . Քրիստոսի  
 հակառակ շարժում մըն է որ չը կրնար  
 իւր արդարանալ, բայց եթէ ստելով  
 այն Աստուածային առածը՝ որ կըսէ .  
 « մարդ լաւ ՚ի չար դանձուց սրտի իւրոյ  
 » հանէ զչար » (Մատթ . ԺԲ . 35) :

« Եթէ տղայք բարի (՚ի բնէ) են . . .  
 » ինչէ՞ն է որ փորձութեան դէմ չեն զը-  
 » ներ » (Եր . 33) : Թէպէտ այս խօսքս  
 մեզի դէմ չէ, այլ ուղղակի Քրիստոսի  
 բայց կըսեմք . անտարակոյս մտքը գը-  
 ղած պէտի ըլլայ Թէ բնութեամբ բարի  
 ըլլալուն ասպացոյց՝ բարի գործել պէտք  
 է ըլլայ . (բարի կանաւը բանին չը դար  
 որ ասպացոյց առնէ . իբր Թէ՞ գործը՝ կամ-  
 քէն եւեւ բնուէ յատկացած ըլլար, և  
 առանց միջնորդի՝ բնութենէն կախուած,  
 կամբն ալ դործէն կախուած) . մանա-  
 լանդ Թէ՞ Աստուածաբանական ճշմար-  
 տութեանց դործը դործել . որ կը յարէ  
 ետեւէն . « Ինչէ՞ն է որ արարչադուր,  
 » ծութեան մէջ երեւցած Աստուծոյ ի-

,, մատութեանը՝ սիրոյն և կարողութե  
 ,, լուսափայլութիւնը անոնց սրտին մէջ  
 ,, չը զարթուցանէր համապատասխանող  
 ,, զգացմունք մեծարանաց սիրոյ և պաշ-  
 ,, տելութեան ,, (եր . 34) : Միշտ հը-  
 ըաշք մը կը վնասէ ապացոյցի . բայց  
 նշան մի տացի . ու թէ որ ուղէ՞ կրնայ  
 դռնել մանկանց համար ? Ե պարտեալեան  
 շար-թիւննին երեսան կը հանեն ըսելուն մէջ :  
 — Ինչէններուն աւատութեանը՝ տեղն է  
 որ մէյ մ'ալ մենք բըղենք . ինչէն՞ն զի-  
 տես բա՛րեկամ, տղոց սրտին մէջ ա-  
 սանկ զգացողութեանց երբէք տեղի չը  
 դանալը չը մղուելը (թէպէտ և միշտ շը-  
 նորհօք) . փորձե՛ր ևս երբէք այդչափ  
 տղոց բաղմունքեանը մէջ՞ ըստ որում կը  
 կարծեցնես զինքնդ իբրեւ աւելի մօտէն  
 աւնջութիւն ունեցող մը տղոց հետ՝ այդ  
 բանը : Հարկա՛ւ տղայ մը՝ երբ որ կա-  
 ընայ ձբխատուր շնորհօքն Եստուծոյ  
 տեսնալ իւր մտացը մէջ դատարկու-  
 թիւնն Վնոր զոյութեան զխտութեանը՝  
 յորմէ իւր զոյութիւնը կոխեալ կայ, կը  
 զարթնու՛ այո՛, անոր մտացը մէջ հա-  
 մապատասխանող զգացմունք մեծարա-  
 նաց սիրոյ և սրաշտելութեան, և գործ-  
 իսկ, ազատ կամօք . թէպէտ և անոր

շակի և մթին, այլ ճշմարտագէտ : Աթէ ո՛չ, ո՛րևտի վայրենեաց Վմերիկայ պաշտօն Մտուածութեան . ահա՛ բեղ տարացոյց հեւաւոր : — Վեր էինք անկրօն անՄտուած վիճից մէջ այս հասարակ եղած առածը՝ թէ տղայ մը ծընանելէն ետեւ՝ առանց ուրուք ուսուցանելով՝ Մտուածութեան դոյութե՛ն ու պաշտօնին կարեւորութիւնը ճանչնալով Մրեւոլ ճաճանչեցիկէն կը խաբուի Վուսազունտին ծուներ կրկնելու իբրև Մրարչի . բայց ո՛չ երբէք ինքըղինքը Մտուածարան, Փիլիսոփոս ծախող ուսուցչէ մը բնական զգացմանց թերադրուեց և դատողութե՛ն պակասութիւն : Վարեկա՛մ, նայէ՛ որ կոշիկէն վեր չելլաս . ելլաս նէ խոյտաւակ կ'ըլլաս ու վար կը վնասուիս : (Թողած ունի՞ս տղայ մը ցայն հասակ կատարելութեան անուս, որ փորձովը գիտնաս : Աս ալ մէկ ուրիշ մոլորութիւն մը իմաստակութիւն մըն է, որ տարակուսական՝ կարելի բան մը՝ որուն հակառակն ալ նոյնչափ կարելի է ըսուեր, իբրև ճրջմարտութիւն մէջ կը ձգէ . որում տրամաբանք կ'ըսեն 'ի կարողութենէն 'ի գործն չե՛հարկուիս : “ Չոր ոչ գիտես և հարցանեն ցբեզ, դու մի՛ ամեթ համարիր

« զչ գիտե՛ն . . . խոստովանել » (Սիրաբ) :  
 — Մարդոյս բնական է իր դատումովը  
 Եստուծոյ գոյութիւնը դանալ , (Վ. րիստ.  
 Եստուածաբ. եր. 58) . զԵստուած ճանչ  
 նալ ու Ենորմէ շնորհակալ ըլլալ . (անդ.  
 եր. 51) : Եւ երբէք տղոց պէս տղէտ ու  
 անուս մտրդիկ՝ անԵստուածութիւն հը  
 նարա՞ծ կամ ընդունա՞ծ չեն (անդ. եր. 88) :

— Եյս չափս առ այժմ՝ հերիք դաս  
 մը թող ըլլայ՝ ՚ի բնէ Բարե՛ մարդէն՝ ՚ի բնէ չար  
 մարդոյն . մէյմայ այսչափ իմաստակութեանց  
 յաճախութեամբ դառնութիւն լեղի չը  
 թափելու այլոց բարկացը մէջ . և ինչ  
 ալ որ ըլլայ , իւր կարողութենէն վեր  
 բանի մը ձեռք զարնել բնաւ չը մտա  
 բերելու . չէ նէ իւր աւելի խայտառա  
 կութիւնները աւելի ճօխ դուրս երևցը  
 նողնիւր չեն պակսիր . և մեծ խելացու  
 թիւն կընէ , թէ որ մեծապէս զգուշու  
 թիւն ընէ թշնամին վիրաւորել ուղիքէն ,  
 որուն համար տասը վերք իրեն և ել տը  
 ւողներ ամեն ատեն պակաս չեն : Եսոր  
 վրայօք մտածելը իրեն թողլով , այս առ  
 թիւ մէջ մտած ուրիշ քանի մը բաներու  
 վրայօք ալ մէյմէկ բիչ խօսելու կը դառ  
 նամբ մենք :

Ո՛վ որ Սուրբ Դրոց հմտութեանը

վրայ դոնէ հարեանցիկ տեղեկութիւն մը  
ունի, քաջ զիտէ թէ ինչ բան որ մար-  
դոյս բերանը կը զտնուի իր սրտին խոր-  
հրդոցը աննման անհամաձայն մանաւանդ  
թէ հակառակ, կեղծաւոր է ան, և հե-  
տեաքար խօսողն է անհաւատ. երբ որ  
նիւթն է կարեւիւր սուտ մը ընդդէմյու-  
սոյ պատճառի:

Նորին Արքայնութիւնը իւր 35 և  
40 երեսներուն վրայ կ'ըսէ թէ բողոքար-  
կուք ևս պատականաց պէս փրկութիւնը  
իրենց ժողովոյն կը սեպհականեն. ով որ  
մեր ժողովքէն չէ, փրկութիւն չունի կը  
սեն, ինչու, որ ճշմարտութիւնը մե-  
ղի միայն յայտնուած է, մենք ա-  
ղէկ ճանչցած եմք ճշմարտութիւնը. ուս-  
տի ով որ մեր վարդապետութիւնը չըն-  
դունիր՝ չը փրկուի և այն կրտեն:

Հակառակորդը՝ իւր 40—41 երեսնե-  
րուն մէջ Հայրապետին աս խօքերը ամ-  
բողջ մէջ կը բերէ. ու կը յաւելու.  
« Եսնք ամենքն ալ Արքայնկոպտին  
» զրբին մէջ դրուած են շփեցմանով.  
» որկէ ընթերցողը կը կարծէ թէ ու-  
» բիշ զրբէ մը քաղուած ըլլան: Մենք  
» զանոնք ստախօսութիւններ կը կոչենք  
» և կը հրատարակենք: Իր խարդաւանքն

« է » (եր. 41): Արևու երեք տող խօսքեր են ասոնք. բայց ա՛յնչափ խարդախ, ա՛յնչափ կեղծաւոր խարեպատիր են և հակասական սուտեր՝ որ չեն կարծուիր առջի բերան. և որոց փիլիսոփայ ճըշդութեամբ անուն ոչ ոք կրցած է ցարդ չափել :

Ի՞նչ բան է արդեօք սքսիսսս-նի-ններ և խարդախանք ըսածը :

Արք որ յանցաւոր ամբաստանեալ մը ես այս ինչ յանցանքին տէրը չեմ, սուտ է աղ իմ վրաս ամբաստանուածը, դրտարտութիւն է, խարդաւանք է կ'ըսէ. ըսել կուղէ թէ կա՛մ ուղղակի կա՛մ անուղղակի այն յանցանքին մէջ մասն չունի : Աւ հոս հակաուակորդն ալ՝ « Աորին Արբաղնութեան ամբաստանութեանը համար սոսք՝ սքսիսսս-նի-նն՝ խարդախանք է կ'ըսէ նէ, ըսել կուղէ թէ ո՛չ բանիւ և ո՛չ դործքով. ո՛չ ուղղակի և ո՛չ անուղղակի կերպով Ասասարչեան Հայերը չեն փրկուիր, կորսասին են ըսած չունին. ու չեն ըսեր : Ուրեմն կը փրկուին հա՞, արտայս-նեան ժառանգորդ են Հայ կըսէք, անա՞նկ է. կորուստըն չեն, չեն փրկուիր չէք ըսեր նէ, ուրեմն կը փրկուին կըսէք. (որով և ուղղափառ կը բարողէք զՀայս. զի փրկու-

-Թիւնն է յուղղափառութեան, և ո՛չ ՚ի մտորութեան): Եւ -- քն՝ փրկու անմիաբանելի հակառակ ծայրեր են, մէջ չունին. փրկութեան ու կորստեան (ուղղափառութեան և հերետիկոսութեան) մէջ երբորդ վիճակ մըն ալ չը կայ. քաւարան մը կայ նէ՛ ան ալ ո՛չ դուք կ'ընդունիք ո՛չ մենք. ուստի դժոխք մը ու Արքայութիւն մը կայ. դժոխք կերթան, չեն փրկուիր չէք ըսեր նէ, Արքայութիւն կերթան, կը փրկուին պիտի ըսէք. որուն անխուսափելի հետեանքն է. ու փախուստի տեղ մնացած չէ:

Ապա՛ ի՞նչ հակադրական շարժառիթներ ստիպած բռնադատած են զձեզ -- այոյ տանը Արքայութիւն ու փրկութիւն բարոյելու. ի՞նչ այնչափ աշխատութիւն այնչափ յողնութիւն հակառակեայ դաւառներէն զձեզ հաս մղէց: Սրբազանը -- կ'ըսէ որ դուք -- այերը չեն փրկուիր կ'ըսէք, բարի՛. հաւատացի. ուրեմն -- այերուն իմացընելո՞ւ եկաք՝ որ -- այք բանի որ իրենց Առսուտըջեան Աղղափառ Ակեղեցիին մէջն են՝ ՚ի կորուստ չեն, կը փրկուին: -- Ի՛նչ Դժոխք. բայց ինչ և իցէ, եղածը եղած է. շնորհակալ եմք այդ մեծ դժասիրական արեւոխներ-

նուզ . բայց ահա գործքերնիդ վճար  
 ուեցաւ : Մենք համոզուած էինք ու նու  
 բէն 'ի ձեր բանից հաստատուեցանք՝ որ  
 'ի փրկութեան եմք . ուրեմն ինչո՞ւ չէք  
 երթար՝ ազնիւ Միսիօնարք . ահա ամե  
 նայն ինչ վճարեալ է . պաշտօննիդ լը  
 մընցաւ . ծանուցիք քարոզիցիք և վստա  
 հացուցիք ևս թէ՛ կը փրկուինք . եր  
 թայք 'ի խաղաղութիւն : — Աւ դուն՝  
 բա՛րեսիրտ հակառակորդ , ինչո՞ւ կը  
 սրտնիս (եր. 79-87) որ Աորին Արբազ  
 նութիւնը ձեզի կ'ըսէ , թէ ի՞նչ բան ու  
 նիք շայց տանք մէջ , զնացէ՛ք ուստի  
 որ եկաք . զնացէ՛ք բա՛րեկամ , եթէ կը  
 փրկուին շայք : Իսկ թէ որ չեն փրկը  
 լիր , դարձեալ զնացէք , ասանկ հրա  
 ման ըրած է Քրիստոս քարոզիչներուն .  
 « Այսպէս ասէ Տէր ով » մը կը խօսիմ ,  
 « քո գործքն » որ զձեզ չընդունին՝ ելէ՛ք ան  
 կէ . բարեկամ զացէ՛ք : Դուն ինչէ՞ն ըս  
 տիպեալ , ո՞ր այսպէս ասէ Տէր էն հրամայ  
 ուեցար « դունեղ վունտես նէ՛ պաճայեղ  
 » կիյնամ » (եր. 85) ըսելու . (չակերտ  
 ներէն չը խաբուիս որ այս խօսքս բառ  
 առ բառ գործքիդ մէջ գրուած ըլլայ .  
 բայց թէպէս ուրիշ բաւերով՝ ճիշդ աս  
 խօսքս ըրեր ևս . շայերէն չիտես նէ՛

Թարգմանել տուր երկուքն ալ, ու ճըշ-  
մարտութեանը վրայ կը հասնիս) : — Ահ,  
նեախիկի միտքանները՝ բնադննիներուն մէջ  
եղած մէկ մեծ տարակուսութիւննին՝ թէ  
կենդանեաց մէջ է՞ն յանդուգն ու է՞ն  
լըբըր ո՞րն է, լուծեր էին, թէ անանուն  
եանց խումբն է. բայց մենք կ'ըսենք,  
թէ անոնցմէ ալ աւելի՞ մեր հակառա-  
կորդն է : Գնա՛ կ'ըսես, չեմ կ'ըսէ, լը-  
ուէ՛ կ'ըսես, կը հայհոյէ. մի՛ ձանձրա-  
ցըներ կ'ըսես, կը խայթէ. խաղաղու-  
թիւն կ'ըսես, որոտում կը հանէ. ու թէ  
որ քիչ մը դաջես, վա՛յ դլխուդ, դլու-  
խըդ դուում կը դարձընէ իր զառանցանք-  
ներովը. բնութեան մէկ հրէջն է. ո-  
րուն օրինակը նոյն բնութեան մէջ չեմք  
դտնար : Ըսա՛ծը քոնէ հասկընայ. հիմայ ալ աս  
ըսածիս ապացոյց կը պուայ. ու ես ա-  
նոր մէկ կերպարանքով երկու զուգըն-  
թաց հակասութիւնները մէջ կը բերեմ :

Տեսանք արդէն որ Հայրապետին բա-  
ղարկո՛ւ փրկո՛ւնէնը երեւոյ ժողովոյն ժայն կուրան,  
և երեւոյ ժողովն դուրս ելող Հայոց փրկո՛ւնէն  
չը կայ կ'ըսեն ըսելը՝ սուտ պրպարտութիւն  
է խարդաւանք է ըսելը հակառակորդին.  
մէյմ'ալ՝ աս ստախօսութիւն է ըսելովը  
Հայոց փրկութիւն քարողելը, Հայո՛ւ կը

քիւնն ըսած ըլլալը . ասկից ալ հետեւա-  
 բար՝ դ՛այս ուղղափառ հրատարակած  
 ըլլալը : Հիմայ ալ կարդա՛յ աննոյն զբը-  
 քին մէջ թէ պէտ ծայրէ՛ի ծայր , բայց  
 յատկապէս սա խօսքերը . « ( Հայոց ) Ա-  
 » պիսկոպոսներն ու Վարդապետները  
 » փոխանակ ժողովուրդը մնտի արարո-  
 » ղու թիւններով և մարդկային հնարքնե-  
 » լով «<sup>ուսման</sup> ընելու » , և Մատուծոյ « խա-  
 » ղաղու թիւն (այսինքն՝ փրկու թիւն) չը-  
 » սած ատենը՝ խաղաղու թիւն է խաղա-  
 » ղու թիւն է (այսինքն՝ փրկու թիւնը՝ ի  
 » ձեզ է) » ըսելու . թող Մ. Լեւտարանը քա-  
 » ըողին . . . (չէ նէ) Բն+ ալ զՔրիստոս  
 » և իր Մատուծաճահար փրկու թիւնը պի-  
 » աի քարողենք անոնց . . . » (եր. 83—84) :

Ես խօսքէն՝ թէ որ բացայայտ ու  
 ճշմարիտ իմաստներ ու հետեւութիւններ  
 կելլան՝ տանք են միայն , թէ Հայոց  
 մէջ Մ. Լեւտարանի ճշմարիտ քարողութիւն  
 չը կայ . Մատուծոյ խաղաղութիւն քաւու-  
 թիւն և թողութիւն մեղաց չը կայ . Հա-  
 յոց Եկեղեցւոյն Ապիսկոպոսներն ու  
 Վարդապետները զՔրիստոս ու իր Մատ-  
 ուծաճահար փրկութիւնը քարողած չու-  
 նին Հայոց . Բրթութեանդ քարողչները  
 միայն այս ճշմարտութիւնները կը քա-

Գողեն կոր մինչև հիմայ . այսուհետև այ՛  
 Հայոց քարոզիչները բնթացքնին չը վո-  
 խեն նէ՛ նոյն Ռոթթէսթանդ բարոզիչնե-  
 րը պիտի քարոզեն Հայոց զՎրիտտու և  
 զՇատուածահար փրկութիւն նորա .  
 յորս Ն՛Ն , և միայն ՚ի նոսին այսօրիկ՛  
 փրկութիւն և ճշմարտութիւն . և այլն  
 և այլն : Բա՛րեկամ , եթէ քու ըսած խօս-  
 քերդ երկայն երկայն՝ և անոնցմէ մէջ  
 բերուած աս կտորը միայն՝ թէ որ ուրիշ  
 իմաստներ կուտան , չեմ ըսեր այլ առա-  
 շել իմաստներ , որ կրնան տելի ևս ըն-  
 դարձակիլ . այլ թէ՛ ասոնց հակառակ  
 իմաստներ կուտան նէ՛ շնորհք ըրէ քու  
 ակնոցդ ինձի տա՛ւր , որ անով կարգամ  
 ու միտք աւնեմ : Աւ եթէ այս ճշմարիտ  
 իմաստները կուտան , ահա քեզի դուդըն  
 թաց երկու հակասութիւն . դուն կուղես  
 նէ զոյդ մը ճշմարտութեանց անուանէ .  
 ըսա որոց քու ճշմարտութիւն ըսածդ  
 մենք այլ կը չափենք : — Ա՛յրը կըսէ  
 իր՝ թէ Սրբազանին ըսածք մենք ըսած  
 չունինք . չենք ըսեր , սուտ է . ուրեմն  
 ինչո՞ւ ըսիր աս խօսքը , թէ որ չէիք ը-  
 սեր : Ա՛յրը աս ըսելովդ հասկըցուցիր՝  
 թէ Հայք կը վրկուին , մենք չենք ըսեր  
 թէ չեն փրկուիր՝ ըսիր , ադ խօսքը սը

տախտութիւն՝ խարդաւանք է • ուրեմն  
 ինչո՞ւ ըսիր՝ թէ Հայոց Եկեղեցին  
 խաղաղութիւն չը կայ, փրկութիւնը  
 ՄԱՆՔԻ պիտի բարոզեմք ու կը բարո-  
 ղեմք : Վերը՝ Հայոց Եկեղեցին ուղղա-  
 փառ կը ցուցունես, հո՞ս ինչու չարա-  
 փառ կը ներկես : Ո՞վ ի՞նչ բան մղեց  
 դքեզ այս հակասութեան • Ճշմարտասի-  
 րութիւնդ, թէ կեղծաւոր խաղաղասի-  
 րութիւնդ : Դիմակդ վա՛ր առ բա՛րե-  
 կամ, որ խառվարար՝ հակառակադիր՝  
 խաբէբայ կեղծաւոր մ'ըլլալդ ճանչ-  
 ցուիս • « Գո՞ւշ է եղեր աչքիդ » Կորին  
 Սրբազնութիւնը • և փուշէն ալ աւելի  
 սուր խայթող ճշմարտութեան խայթոց  
 մը • կռիւի ադ մեծ ախորժակդ ինչո՞ւ  
 կը ծածկես նենդաւոր սուտերու բարե-  
 պարիշտ կոկիկ կլորիկ բաւերու տակ •  
 Թէ որ լեզուադարութեան լեզուանու-  
 թեան ամեն գէշութիւնները ամեն գէշ  
 յատկութիւնները կուզես լեզուիդ վրայ  
 բոլորել ու յաճախել, դողա՛, զի « Դ՛  
 յաճուի՞նք » • « Ե, յապէս ասէ Տէր » • Ծած-  
 կեալ ճշմարտութիւնք՝ փոքր մի և հա-  
 լասար է անհաւատութեան • Եթէ բու-  
 բարողած Աստուածդ ու ճշմարտութիւ-  
 նըդ ալ ադ բերնիդ ճշմարտութիւննե-

րուն րէս են նէ՛ հերի՛ք որ ադ վաճառ-  
 քէդ մեճ շահ մը հանես . բայց հաշ-  
 ուետուճարիդ մէջ ադէ՛կ նշանակէ . որ  
 աներեկ օր մը աչքիդ փուշ եղող այն  
 բարձրատիճան Քահանայապետին հետ  
 դուն ալ Ետեան պիտի ելլաս ու պա-  
 հանջուխ . . . : — «Սայէ՛ որ ա՛լ չաշխա-  
 տիս Նորին Սրբազնութեան զձեզ խար-  
 դախ , սուտղորոյց , խաբերայ , խուփար ,  
 կուռասէր եւ անուանելը (զոր դառնու-  
 թեամբ սրտիդ կը յիշատակես աւջի է-  
 ջերուդ մէջ) , փորձով զորձքով վրադ  
 եւ՛ս ընելու . ինչպէս որ ըրիր . և խո-  
 նարհական խոստովանութեամբ ինկի՛ր  
 Հովուին զթութեան գիրկը , որուն գէ՛մ  
 այս անուրանալի յանցանացդ համար  
 ըստ քոյդ ևս վարդապետութեան՝ Ա՛ն  
 միայն կրնայ թողութիւն տալ . « Խոս-  
 » տովան լերուք միմիանց զմեզս » խօս-  
 քը ինտո՛ր կը մեկնես նէ՛ դոնէ այս ա-  
 ռաջին անգամ գնա՛ արդեամբ կատա-  
 քէ . « և մի՛ ամաչեր փասն մեզայ քոյ » :

Խօսքերնիս հիմայ ուրիշ նիւթի մը  
 վրայ շքե՛ք :

Քրիստոնէութեան՝ նկատմամբ քա-  
 րողչաց՝ կուսակրօնութեան վարդապե-  
 տութիւնը քաջայայտ կերեւնայ՝ թէ

լիզի հաս մըն է եղեր մեր հակառակ  
 կորդին, թէ որ Վենետիկեան միաբանից  
 լեզուովը կերբերոսի պատառը կամ Բա  
 նիելի վիշապին դնտակը չէ եղած: Կու  
 սութեան ձայնը ականջը հ'նչելուն պէս  
 կը խրտչի մեկէն, խիղճը կը խայթուի  
 ու շուարած ինչ ընելիքը չը դիտնար  
 ալ աղաղակ ձայն չը թողուր կը պօռայ  
 « ինչո՞ւ չամուսնանան »: Մի՛ լքանիր,  
 աղնիւ Արէց, « թոյժ Կանիս նէ » ամուս  
 նացիր կըսէ բեզի Մուսքեալը. բեզի ալ  
 երիցուհի մը չը պակսիր: Բայց է՛ն ա  
 ռաջ՞ բու ժուժկալութիւնդ կը վերաւո  
 րես: Բա՛ջ է. Մուսքեալը անժուժկա  
 լութեան վիճակ ցուցունել չէ որ ու  
 զեր է հրամայել ամուսնութիւնը. նը  
 կատմամբ քարողչաց միայն առնեմք նէ  
 կրնամք մեկնել այս խօսքս. ըստ որում  
 Մուսքեալ մը՝ քարողչի մը՝ որ քաղաքէ  
 քաղաք պտըտելու պարտաւորեալ է,  
 իւր անժուժկալութեանը սպաս հարկա  
 նելու համար հետը կնիկ պտըտցընելու  
 մեծ անպատշաճութենէն ուրիշ բան չը  
 կայ:

Յանուանէ (71) Երբեպիսկոպոսին  
 հանրահաչակ ողբերգութեանը, և անորո  
 շակի (63) բոլոր Ապիսկոպոսաց կուսա

կըրօնութեանը եղջերք յարձակելով՝  
 Հայոց Ակեղեցւոյն Պաշտօնէից ամուս-  
 նացեալ Քահանայից և Սարկաւազաց  
 դասերն ալ այս վարդապետութեանս  
 վրէժխնդիր յարուցանել ուղեւուն հա-  
 մար՝ ծանրկէկ զինքը կը հարկանեմք ո՛չ  
 առ ՚ի մահ, ՚ի զղջութի՛ւն :

Աւրիշ տեղ՝ երբ որ ՚ի մէնջ խօսք  
 կըլլայ ընդհանուր բողոքականաց վրայ,  
 և մէկին կարծիքը վարդապետութիւնը  
 միւսին դէմ կը բերուի, բողոք բողոքի  
 վրայ կ'ազդողակեն, թէ ապօրինաւոր է,  
 անոր յանցանքը ի՞նչ քառ դնել : (Ինչպէս նաեւ  
 մեր հակառակորդը՝ Մորին Արքազնու-  
 թեան բողոքարկուաց համար « Սուրբ  
 » Հոգիով կը խօսինք ու կը գրենք » կը  
 սեն ըսելուն դէմ բարկանալով՝ կը շար-  
 բարէ կըսէ (եր. 41), թէ՛ և աղէկ զի-  
 տէր՝ որ Ղուտերեանք և ՚ի նոցանէ հեր-  
 ձեալք տարաբաժանեալք ասկէց աւելի-  
 ները կը շաղակրատէին ու կը շողփաղ-  
 փէին . մարգարէանալ անդամ կը կեղ-  
 ծաւորէին . զորս կրնան ընթերցողք տես-  
 նալ ՚ի վարս Վարտինոս Ղուտերի, որ  
 տպեալ է ՚ի Վէննա . և ՚ի բողոքար-  
 կուաց հրատարակեալ պատմութեան  
 Ժ.Ք. դարու բարեկարգութեան) : Ապա՛

Ի՞նչ անՎստուած օրէնք ու իրաւունք է  
 հակառակորդին մէջ բերելու՝ մեղի դէմ  
 նոյնչափ հակառակորդ հանդիսացեալ  
 Ակեղեցեաց կուսակրօնութեան զեղծ-  
 մունքներն՝ մեր Ակեղեցականաց ողջա-  
 խոհութիւնը խայտառակելու մտօք. չա՞-  
 մբնար անսպառկառ զխօք հակառա-  
 կորդաց ամօթոյն վրայ մեր կարմրելը պա-  
 հանջելու: Ի՞նչ կապակցութիւն՝ չըսեմ  
 հակակրօնութիւն, Հայոց և հակառա-  
 կորդ Ակեղեցեաց Ակեղեցականացը մէջ  
 կայ. ու ի՞նչ լար է ան որ աս երկու  
 դասերը իրարմէ կրբաժանէ: — Կուսա-  
 կրօնութեան՝ եթէ Հայք պաշտպան են,  
 ապա կա՞ծ նուիրելոյն ուխտն է. որ նոյն-  
 չափ անձնուրացութեամբ քարոզչութե-  
 պաշտօնի ապա կա՞ծ նուիրողներէն կը պա-  
 հանջէ Ակեղեցին. և որուն էն դոյզն  
 զեղծմունքին չը ներեր, վրէժխնդիր է:  
 Աւ եթէ ինչ և իցէ ուխտ՝ Վստուծոյ  
 անրնդունելի ըլլալը, և ՚ի հակառա-  
 կէն՝ շնորհաբեր չըլլալը հակառակորդը  
 հաստատելու յանձն առնելու չափ յան-  
 դրդնութիւն ունենայ նէ, ուխտս դի՛ք  
 և կատարեցէք մը ըսելէն ետեւ պէտք  
 եղած պատասխանը տալէն չեմք փախ-  
 չի: Եթէ կուսութիւնը մարդահար

խաբէութիւն է, սուտ վարդապետութիւն և դրօշակ այն մեծ ապստամբութեանը, շնորհագուրկ վիճակ մը կամ նուազ շնորհաւոր քան զամուսնութեան վիճակն, ուրեմն ի՞նչպէս մեկնելու և իմանալու եմք Քրիստոսի « կան ներքինի » ներ՝ որ Մատուծոյ Մ. քայութեք համար » ինքիրդինքնին ներքինի ըրին » ըսելը :

Բայց ինքը՝ կուսութեան յար վըտանդի ենթակայ ըլլալէն չէ թէ ամուսնութիւնը քաղաքէ քաղաք քարոզչութե պտրտելու կարգի մը՝ այլ անժուժութեան սպաս հարկանելու համար եղած ամուսնութեան անպատշաճութիւնը հաստատելու էր : Եւ այս նկատմամբ Հայոց Եկեղեցին կուսակրօն և կարգուած դասերէ պաշտօնեաներ ունի . ետքիններուն հաստատուն բնակութիւն և մի և նոյն տեղի մը ցկեանս պաշտօնը ունենալուն համար . և առջիններուն քաղաքէ քաղաք յար խրկուելուն համար :

Եւ եթէ Հայք իրենց կուսակրօն կարգին արդելք մը դրած են ընտանեաց մէջ բնակելու նկատմամբ . չէ թէ ան « կրօնաւորաց պարկեշտութեանը վը » ըսյ ունեցած վարկումը կը յայտնեն » աս արդելքով . ինչպէս կաղճատէ հա

կառակորդը ( եր . 71 ) , սեւ աղա մը  
 բսելով ու մուր բոլոր կուսութեան կար-  
 դին , այլ ապահանեալ բնութեան կոր-  
 ծանման առիթ չը տալու համար : Մարդ  
 շատ անգամ՝ իւր կամայական մէկ նպա-  
 տակը՝ որ ջափ և ամենամեծ աղատու-  
 թեամբ ուղղած ըլլայ դայն՝ կը փոխէ  
 անդիմադրելի հարկաւորութիւններէ շար-  
 ժառիթներէ . մէկ բան մը կայ՝ որ անհնա-  
 րին է մարդոյս ընել . բնական օղնճի  
 օրէնքին դէմ գործել : Աւր խախտ է , հոն  
 կրակ մօտեցընելը յիմարութիւն է : Աչ-  
 քին ցանկութիւնը՝ էն երեւելի սուրբե-  
 րուն ալ հրէշտի սասան եղած է . որոնց՝  
 թէ որ շնորհքը չը հասնէր՝ կիցնային :  
 Բայց շնորհքը՝ ի թիկունս է ըսելով յի-  
 մարաբար վտանդին դիմելն ու չը վտան-  
 դել ըսելն՝ երեկուրնէ ու առջի օրուր-  
 նէ կապուած խենթինն է . յօրմէ՝ հա-  
 կառակորդին յառաջ բերած շատ մը  
 զեղծմունքները կը պատճառին . որոց ա-  
 մենէն ալ աղատ է Հայոց Ահեղեցին :

Հոս ալ որ մարդ կը պատճառաբանէս բա-  
 րեկամ . որ Հռովմէա կան դատուն միայն  
 դէմ ըլլայ նէ քի ճի կը դօրէ . որուն պա-  
 տասխան տալու պարտաւոր չե՛մ : Չէ՛  
 նէ՛ ՚ի կարողութենէ ՚ի գործն չէ՛ հետեւութենէ

իմաստակութեան ելեր ես սորէս :

Անցի՛ր հող բա՛րեհամ : այսչափ մը առ այժմ ընդհանրապէս ասոր վրայօք պատասխանելէս ետեւ՝ միւս տղձատանացի դէմ՝ Մորին Սրբազնութեան բարի մարդը նորէն քեզի ներկայացընելով՝ բանի մը իմաստակութիւններդ ու խաբէութիւններդ ալ վրայ աւելցընեմ ուրիշ ասոր մօտաւոր նիւթի մը վրայ :

Մարիամու մշտնջենաւոր հոլսութիւնը և անոր սուրբ Քրոց մէջ անորոշ խնդիր չըլլալով որոշակի ծանուցուած ըլլալը . որ թէև էականապէս և բացարձակապէս փրկութեան հարկաւոր չէ՝ բայց զանազան պարագայից մէջ չը խոստովանելը կը դրկէ զմարդ փրկութեանէ՝ զանազան նկատմունքներով : Ի՛նչ բան որ իբրեւ ճշմարտութիւն և իբրև հարկաւոր ՚ի զխտել՝ սուրբ Քրոց մէջ զրուեր է . «—բանալը մարդս կը դրկէ փրկութենէ . թէպէտ և դաւանիլը էապէս հարկաւոր չըլլայ փրկութեան :

Ե. յապէս՝ եթէ սուրբ Կուսին մշտնջենաւոր հոլսութիւնն ալ յայտնուած է սուրբ Քրոց մէջ նէ՝ հերքելը՝ Աերշնչողին դէմ է . և զխտելը՝ փրկութեան էապէս հարկաւոր չէ՝ ալ նէ՝ հերքելը

ի կորուստ կառաջնորդէ զմարդ : անց ցո  
 Այլ է՛ն առաջ՝ Կորին Արքայնու  
 Թեան դէմ խօսածները աչքէ մը անցը  
 նեմք :

Որովհետեւ Մարիամայ կուսութիւնը  
 Քնն իւր անդամնէ՛ որդին ծնանելու ատենը  
 յայտնի որոշակի ցուցուեր է ՚ի սուրբ  
 Կիրոս . որոշելու կէտը մնացած է՝ ան  
 Քննէն Քնն մտը Մարիամու :

Եւ որովհետեւ Առաքելոյն զիտաւո  
 թութիւնը մինչև անոր ծնունդը ամուս  
 նական յարաբերութիւն մը բնաւ ունե  
 ցած չըլլալին էր ցուցունել խօսեցե  
 լոց , Քնն ցուցիչ նշանաւ վարուած է .  
 քանզի անկէ ետքի ատենը իւր պատմե  
 լիք աւետեաց անարատ յղութեան՝ հետ  
 վերաբերութիւն մը չունէր : Մնն բա  
 ւը մէկ սահման մը ունի որոշ նշանակ  
 ուած իր ետեւէն . որկէ ժամանակին տե  
 ւողութիւնը անդին չանցուներ նախայի  
 շատակեալ իրողութեան նկատմամբ :  
 Այս մտօք ցարդ բողոքականք Քննը ա  
 պացոյց կառնէին թէ ուրիմն անկէ ետ  
 քը այդ յարաբերութիւնները ունեցան .  
 Թող որ ասկէ աս պիտի հետեւէր՝ որ ծը  
 նանելէն և անուանակոչուելէն անձնապէս  
 ետե՛ւ ադ յարաբերութիւնները սկըսան .

որ բնականի ալ դէմ է :

Նորին Սրբազնութիւնը սուրբ Գիրքէն չորս հինգ վկայութիւններ կը բերէ, (եր. 76—77) յորս Բնւեր մշտնջենաւոր յարաձգութեան ժամանակի զօրութիւն ունի . և այս Բնւն ալ անանկ պիտի իմանամք կ'ըսէ : — Հակառակորդը կը ծաղրէ միայն անոր աս ցուցմունքը և անով զոհ կըլլայ . քանի մը մինչևներ ալ կը շարէ հոն . և ասոնք ալ պէտք է յուսելու իմանալ կ'ըսէ : Եւ խորին իմաստութեամբ մ'ալ « իր զաղափարին համեմատ նշանակութիւն մը տալը՝ կըրկն » նու՛մն սկզբան է , և ո՛չ ուրիշ բան » կ'ըսէ (եր. 77) : Ուրեմն՝ կըսեմք մենք ալ՝ ադ դոյն բանը քու վրադ ալ կը շարջես . քու զաղափարիդ համեմատ նշանակութիւն կուտաս դուն ալ՝ առանց տպացուցութեան . դուն ալ կընես սկզբան կ'ընես , և իսկը՝ յոսի շրջան :

Եւ որովհետեւ Քրիստոսի համար անբնականի որդի ըսած է Սարիամայ՝ Նւետարանիչը՝ ան նոյն տեղը . և անբնական ալ յարաձգման էն առաջ ծնած կը նշանակէ , ասկէց կ'իմացուի թէ կընայ ըլլալ որ յետսածին ալ ըլլայ : Եւ որովհետեւ Բողոքականք ալ այս մտօք առնելով բա-

ուր՝ կըստեն թէ՛ ուրեմն յետօածին եղ-  
 բայր ալ ունեցաւ Քրիստոս, ուսլա ու-  
 րեմն կոյս չը մնայ Մարիամ. Մորին  
 Սրբազնութիւնը իւր 77—83 երեսներուն  
 մէջ կ'ապացուցանէ, թէ աս անդրա-  
 նիկ բառէն մարմնաւոր անդրանկութիւն  
 առջինն կու՞թիւն չը պիտի իմանամք: Ըս-  
 կառակորդը ծաղր կ'ընէ աս բանը. այլ  
 մտքուր կ'ըսիկ գրեւով զինքը ու իր  
 տղխտութիւնը ծաղր կ'ընէ: Սուրբ Վը-  
 րոյ մէջ անդրանկ բառը է՛ն ընդհանուր  
 արդանդ բացոյն նշանակութեամբ գործած-  
 ուած է. և շատ քիչ անգամ յառաջա-  
 ծին՝ առջինն նշանակութեամբ: Աւս-  
 տի՛ Մորին Սրբազնութիւնը ծաղրած կըլ-  
 լայ աւելի ընդհանուր նշանակութեամբ  
 առնուիլ պէտք է ըսելուն համար. չէ  
 նէ ծաղրասէր հակառակորդը զիւր ծաղ-  
 րելի տրամաբանութիւնը, էն քիչ գրե-  
 թէ ոչ սովորեալ եղանակի նշանակու-  
 թեամբ առնուիլ պէտք է ըսելուն հա-  
 մար: Ա՛յ իմ սիրելի բարեկամս, բուն  
 աս կէտն էր հաստատելքդ. ի՞նչ բան  
 ստիպեց գրեղ ծաղրով մը և եթ անցնե-  
 լու. կընտան սկզբան կայ նէ՛ քուկդ չէ տէ  
 չէ. ՚ի կարողութենէ ՚ի գործն շէ անտեսութեան  
 իմաստակութիւնն ալ բարեկամ, հե-

րի՛ք, զգուեցանք ադ իմաստակութիւնն  
նէրէդ . հերի՛ք :

Գարձեալ Աւետարանի մէջ եղբայր և  
+այր Քրիստոսի ըսուած ըլլալով՝ Վորին  
Սրբազնութիւնը իւր 83—87 երեսներուն  
մէջ կը հաստատէ օրինակօք և ազգահա-  
մարովք թէ եղբայր և +այր բառերով բնա-  
կան եղբայր և քոյր չը պիտի իմացուին,  
այլ ազգականք Քրիստոսի : Հակառա-  
կօրդը աս ալ ծաղր կ'ընէ . և ան նոյն  
դեղեցիկ իմաստակութիւնը կ'ընէ՝ թէ  
այս ալ կրկնուած սկզբան է : Ֆոխանակ անոր  
տուած է՛ն բանաւոր է՛ն խելացի ու է՛ն  
հաւանական (ճշմարտանման հաւանական)  
պատասխանը հերքելու . փոխանակ պատ-  
մութիւնը հերքելու՝ ( ուստի Սրբազանը  
այս ապացուցութիւնս կը հանէր, և ո՛չ  
իւր գրպանէն . որ ամենայայտնի ճշմար-  
տութիւն ըլլալուն համար վկայութիւն-  
ներ չէր բերեր) . սուտը հանելու ապա-  
ցուցութեամբք՝ կրկնուած սկզբան ըսած իմաս-  
տակութեամբ ինքը կ'իմաստակէ . ու  
գարձէր Վորին Սրբազնութեան կրկնուած  
սկզբան կ'ընէս կը պօւայ . իւր տունը  
բունկեր է չը՛նայիր, Սրբազանին ճրա-  
ղը տեսնալով կրակ կայ կը պօւայ բո-  
լոր ուժովը . ու ծաղրական խօսք մը Կի-

բայէս և ճշմարտայէս իւր խի անձին վրայ  
 միայն վայլեցուցած դրած ըլլալուն հա-  
 մար՝ մենք ալ ահա կը շրջեմք իւր վրան  
 «Վ. յարէս ահա աս դուրսը ամբողջապէս  
 « իրեք իմաստակութիւն կը բովանդակէ  
 « ծայրէ՛ր ծայր . (եւրեքին վրայ մէյմ՝ ալ  
 « յաւելուած ըրիր հիմայ դուն). իմաս-  
 « տակութիւններն ալ իրարմէ շատ տար-  
 « բերութիւն մը չունին . վասն զի առ-  
 « ջինք կրկնումն սկզբան է , և երկրոր-  
 « դը՛ կրկնումն սկզբան է , (մէյմ՝ ալ՝  
 « ՚ի հարողութենէ՛ր գործն). և երրորդը կրկ-  
 « նումն սկզբան է՛՛՛» (եր . 78—79) :  
 — Ար տարակուսիմք՝ որ նոյն ինքն սա-  
 տանան թէ որ ուղէր , կրնա՞ր երկնեւ  
 այսչափ խաբէութեամբ ձևեր : Էրիք  
 է ալ ըւէ՛ր Արնի՛ւ Բերիայի . ադ իմաս-  
 տակութիւններդ Վեբիկայ կամ ու իցէ  
 ուրիշ երկիր կուղես նէ հոն տար ծա-  
 խէ , ո՛ւր որ յաճախորդներ կարենաս  
 դտնել . և փոխանակ՝ Նորին Սրբադնու-  
 թիւնը Վինամ Փիլիսոփայիդ առջին  
 ծունկ չողեցրնելուդ՝ դուն ինքնդ խոնար-  
 հէնատէ, աղուոր դաս մը աւ մոլորութիւն-  
 ներդ շիակելու : Աւ սրովհետև Վինամ  
 Փիլիսոփայդ աս քու մոլորած իմաստա-  
 կութիւններուդ ամենը բեղի չը կրնալ

Թուելուն համար այսչափ շատ ու յա-  
 ճախ մոլորութեանց մէջ կը թաւալիս,  
 առ այժմ այս պատասխանէն առած դա-  
 սերդ աղէկ սերտէ . ուրիշ անգամ՝ երբ  
 որ նոր իմաստակութեանց մէջ ալ մոլո-  
 րիս՝ որոնք չը գիտնաս, կրցածիս չափ  
 անոնք ալ քեզի սորվեցընելու ձեռքէս  
 դայ նէ կ'աշխատիմ, բաւական որ խը-  
 րատս աղէկ բռնես :

Իսկ հիմայ՝ քեզ ուրիշ տեղ մը կը  
 տանիմ, սուրբ երկիր մը : « Այժմ զիօշիկս  
 » յոտից քոց . զի երկիր սուրբ է » : Յ'ւշ  
 Պաօսխումէ՛, պատգամ Մատուծոյ պիտի  
 ընթեռնուս :

Ահնոցդ դունաւոր է նէ հանէ՛, որ  
 ես քեզի առաջնորդեմ սուրբ Իլիրքը կար-  
 դալու : Հեռուն չեմ խրկեր . քու փրը-  
 կութեանդ դուռը, Յիսուսի խաչին տա-  
 կը . հո՛ն կայնէ, ու ես քեզի քու Աւե-  
 տարանիդ մէջէն երկու խօսք կարդամ,  
 կարճաւօտ . բայց « Այսպէս ասէ Տէր »  
 ով մը . որուն վրայ թերեւս մինչեւ հի-  
 մայ ուշադրութիւն մը ունեցած չես . ու  
 շնորհք խնդրէ դուն ան խաչէն՝ որիէ  
 փրկութեան կայլակներ հոսեցաւ, որ  
 քեզի նոր միտք ու լոյս տայ, որ անոր  
 պատգամները ողջմտութեամբ իմանալու

կարենաս :

Յիսուս խաչեալ . Ընոր մայրը Մարիամ՝ առ խաչին . Յովհաննէս սիրելի աշակերտն ալ հոն՝ մօրը . ահա՛ կը խօսի Յիսուս . « Ը, յապէս ասէ Տէր » . « ըսաւ (Յիսուս) իր մօրը . ո՛վ կին՝ ա՛ » . « հա՛ քու որդիդ : Ատքը ըսաւ աշակերտն » . « ասէ » . « ահա՛ քու մայրդ . և ան ժամանակէն աշակերտը անիկայ իր քովը առաւ » (Յովհ . Ժ (Ժ) . 26—27) :

Ըտոր մէջ « Ը, յապէս ասէ Տէր » մը կայ . ծո՛ւնը դիր՝ բա՛րեկամ, երկրպագելի պատգամին . ու դողա՛ որ չաքացիա խթանին դէմ, (ինչպէս չգիտութեամբ ըրեր ես), զի « խիստ է բեզ » :

Բրիստոս Բայն, Բայնակ, Բեկաստիկ, Բեքին է եղեր մօրն Մարիամայ . ուստի և երես րեդու ուրիշ որդի մը կուտայ մօրը զՅովհաննէս, որ ան որդի չը մնայ :

Մարիամ Բայն Բայնակ է մնացեր . նայող հողացող այդ կամ որդի չունի եղեր Յիսուսէն դատ, որ զինքը հողալու համար Յովհաննու կը յանձնէ :

Սև արդեամբք ալ երիկ կամ որդիք չունի եղեր, որ ա՛յն վայրկեանէն Յովհաննու քով կերթայ Մարիամ . և Յովհաննէս դայն կը հողայ, ու հիջ մէկ

երիկ կամ որդի կամ դուստր անուշով  
մէկը չի գար Յովհաննէսէն պահանջէր  
մինչեւ Սարիամու մահը՝ թէ ինչո՞ւ իմ  
կնիկս կամ մայրս քովդ ես առեր, ու  
զմեզ իրմէն զրկեր ես :

Ըսոնք երբէք միտքէդ անցե՞ր էին  
բա՛րեկամ. ու թէ որ մէկը քեզի յուն-  
կանէ փախար նէ՛ երա՞ւ — ցնոր՝ Անդէոս  
է կըսէի՞ր արդեօք . և սակայն վրան  
« Ը, յապէս ասէ Տէր » մը կայ :

Երկու « Ը, յապէս ասէ Տէր » ալ  
յուշունեմ քեզի . առաջ Ի Ս Ըստուա-  
ճաշունչիս, ետքն ալ Վրահիներ :

« Փրկեա՛ ՚ի սրոյ զանձն իմ, և ՚ի  
» ձեռաց շանց շահարկիւն իմ » ( Սողմ .  
ԻԸ . 20 ) :

« Նայեա՛ առ իս և ողորմեաց ինձ . զի  
» յահար և աղքատ եմ ես » ( Սողմ . ԻԳ .  
16 ) :

Ո՛ւր ասա երկու « Ը, յապէս ասէ  
Տէր » Վրիստոսի համար ՄԻԸՄՕՐ  
կըսեն . այսինքն է՛ ՄԻԸՃԻՆ՝ ՄՕ-  
ՐԸ ՄԷԿՆԸՍԻԿԸ : — Ո՛վ իմ ամենա-  
սիրելի բարեկամս, կը հաւատա՞ս՝ որ  
սուրբ Իրբին մէջ Հողին սուրբ ալ  
Գաւթի բերնովը՝ Յիսուսի մօրը Սարի-  
ամին համար՝ հանձնաւորապէս կոչս է, կոչս

Գիտի ծնայ ըսած է . և սակայն բուն իրն  
 ալ ասանկ է , և առանկ ըսե է : Յի-  
 սուս ճորը ճիւղաբնէն է ըսելը՝ Վրիստոս  
 ուրիշ եղբայր և Գոյր՝ ուստի և Մարիամ ալ երկէ  
 ըսել է . այր չը զիտնալով զՅի-  
 սուս ծնանելէն ետեւ՝ դարձեալ ո՛չ եր-  
 բէք այր զիացաւ ըսել է : Ըսոր Վր-  
 յիստոս ալ փորձովը կուզէր ցուցունել  
 մեզի իւր էակցին բարողութիւնը , որ երբ  
 խաչին վրայ էր՝ յորում շատ կակծող ցա-  
 ւեր ունէր իւր մարմինին մէջ զգալու և  
 անոնց վրայ միայն խորհելու , իւր մօրը  
 անտանելի միայնութիւնը՝ թշուառ , ան-  
 տերունչ , միայնակ և անպաշտպան մնա-  
 ցած ըլլալը մտածելով՝ դարման կը տա-  
 նէր անոր ամենաճշմարիտ ցաւոցը . որ  
 զի մը կուտար անոր անորդի-նեանը՝ ըզ-  
 Յովհաննէս . որ անորդի անպաշտպան  
 չը մնայ . մայրն Մարիամ ալ իւր որ-  
 դեզրին բովը կերթայ . անոր պաշտպա-  
 նութեանը հողացողութեանը տակը կը  
 մտնայ . ու թէ որ ունէր երիկ մը կամ  
 որդիք՝ անհնար էր որ անոնց դո՛նէ մէ-  
 կը թողոյր ու աշակերտին տունը եր-  
 թայր՝ ընդդէմ բնական և շնորհական  
 օրինաց , ու չը բամբասուեր ՚ի Հրէից և  
 ՚ի Վրիստոնէից :

Ըստնք ասանկ որո՛շ քու Ըստուա  
Ճաշունչիդ մէջ գրուած են :

Մեծ ամբաստանութիւն մըն է կը  
նեմք տսիկայ , և հակառակորդին զայ  
րացման սուխթ կուտամք , ինչպէս զայ  
րացեր էր ‘Նորին Արքաղնութեան ա  
սանկ ասոր նման ամբաստանութիւն ը  
նելուն դէմ ( եր . 87—97 ) . և « սեւա  
դէմ սուա » անուաներ էր աս բանը :  
Բայց մեք պիտի ըսենք ու ապացուցա  
նենք որ իւր անուանակոչութիւնն և ու  
րացութիւնն է է՛ն զարշ զաղեր սեւա  
դէմ սուաը . խարդախած են այո՛ , խար  
դախած են սուրբ Բիրքը աշխարհա  
բաւին մէջ : Ո՛րչէ թարգմանուած չին  
վերոյիշեալ Վաղմասայ խօսքերը :

Բայց մեզի պատասխան պիտի տըր  
ուի , թէ « կը թուի թէ տգէտ է աս  
» բանիս վրայով թէ Բրոթէսթանք Ըստ  
» ուածաշունչ մատեանները բնագիրնե  
» ըն կը թարգմանեն , Հին Ասորիանք  
» Եբրայիտն բնագիրն և ‘Նոր Ատակարանն  
» ալ Յունարենէն . . . » ( եր . 89—90 ) :  
— Հատ աղէկ զիտնալով աս բանս՝ բարե  
կամ , նորէն կըսեմք , թէ ձեզի անա  
խորժ դառն համ տուող Վարխամայ կու  
սութիւնը հերքելու համար՝ այս խարդա



տայ աստղանիշող սը , ու կրտէ՛ թէ Աբ-  
 րայեցերէն բնագրին մէջ Արամորուհի-նս  
 գրուած է . այսպէս «\*Աբր . միամօրու-  
 թիւնս » : Բուն իսկ աղ բանն էր նսպա-  
 տակնիդ ընելիքնիդ , բա՛րեկամ , Աբրա-  
 յեցերէն բնագրէն թարգմանել չին կը-  
 տակարանը . ի՞նչ բան զձեզ ստիպեց աղ  
 բառը Աբրայեցերենէն չը թարգմանել :  
 Բայց պիտի ըսէ՛ թէ ծանօթութեամբ  
 ճշմարիտ թարգմանութիւնը ցուցուցած  
 ըլլալնուս համար խարդախութիւն ըրած  
 չեմք սեպուիր : Այլ ի՛նչ ըսելիք ունի՞  
 թէ որ ցուցունեմք իրեն 1857 թուին  
 կ. Պօլիս ՚ի Տպարանի Մ. Յովհաննու՛  
 նոյնպէս «Աբրայական և Յունական բը-  
 նագիրներէն թարգմանուած » ծանուցու-  
 մով տպուած Աստուածաշունչին մէջ  
 այս Բամօրուհի-ն բառը նոյնպէս կեանք  
 թարգմանուած ու ծանօթութիւն տրուած  
 չըլլալը . որ յայտնապէս ճիշդ Աբրայա-  
 կան բնագրին թարգմանութիւնը չէ .  
 բնագիրը՝ Ժըւ Ռէ հասիւլը կ'ըսէ , թարգ-  
 մանութիւնը կեանք կ'ըսէ . ու թէ որ աս  
 երկու բառերը նոյն բանը ըսել են նէ՛  
 թարգմանութիւնը հաւատարիմ եղած  
 կ'ըլլայ . ապա թէ ոչ ինչպէս ալ չէ ,  
 միշտ անհաւատարիմ , խարդախ է աղ

Թարգմանութիւնը . և ամենախորհրդանշանա-  
 դէ՞ս սուր՝ աս է՞ այր զիշերադէմ՝ ու չէ  
 թէ՛ Նորին Սրբազնութեան ամբաստա-  
 նութիւնը : Նւ աս մէկ խարդախութիւ-  
 նը չէ, քննասէրք ուրիշ շատեր ալ կը  
 գտնան ան նոյն Թարգմանութեանց մէջ .  
 որոց թէ որ չը համողութի հակառակոր-  
 դը՝ երկրորդ անգամ մէկ քանիններ նորէն  
 կը ցուցունեմ . յորոց մի ինչամենաճըշ-  
 մարիտ եղբակացութեան, թէ մէկ տեղ  
 մըն ալ ըլլայ՝ սուտ կամ խարդախու-  
 թիւն մտեր է, ամենաճշմարիտ հաւանա-  
 կանութիւն է՝ թէ ուրիշ տեղեր ալ ան  
 նոյն ստութիւնը խարդախութիւնը խառ-  
 նուած ըլլայ . . . :

Ի՞նչ բան ստիպած է զձեզ այր դու՞  
 այս խարդախութիւնը ընելու . հերքե-  
 լով համար զմշտնջենաւոր կուսութիւն  
 Սարխամու . ադ ի՞նչ ոխերիմ քէն նո-  
 րին՝ ի մարդարէութեանց երանեալ վի-  
 ճակին . չե՞ս ուղեր զինքը երանել,  
 բայց ան կը մարդարէանայ հաւատարիմ  
 հօտին համար, «Նհա այսուհետև երա-  
 նեսցին ինձ ամենայն ազգք » . չե՞ս ու-  
 ղեր զինքը իւր բարձրութեան աթոռին  
 վրայ ճանչնալ, բայց ան կըսէ . «(Տէր)  
 բարձրացոյց զխոնարհս » (Ղ ուն. Բ. 48

—52) : Գուն խոնարհեցուր , արհամարհե իւր յարդութիւնը . բայց Տէրը !ք բարձրացրնէ , բարձրացոյց . «Ով է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ » (Հուովմ . Բ . 33) : — Կամակարկը թողում զքեզ այս տողերուս մէջ , որ լաւ զեղջ ու ապաշաւ մը՝ թէ որ կուզես այն Աստուածահասար փրկութիւնը չբհաստել որ ծագեցաւ յԱստուածորդոյն՝ բերես . զի քեզի համար ալ միշտ պատրաստ է առ Աստուածորդին բարեխօսելու . բաւական որ անոր դէմ սխութեան քարեղէն սիրտդ Աստուածակիր մարմնեղէն սրտի հետ փոխես , ու ապաշաւես :

Եւ որովհետեւ Աստուածածնայ միջնորդական բարեխօսութեանը , (Եր . 76) պահոց , (որ ըստ իմիք կ'ընդունի . Եր . 63) մկրտութեան և վերստին ծննդեան . (Եր . 80—82—100) վրայէն կանցնի . ուրիշ գործոց մէջ ասոնց վրայ կարդարու . մենք ալ նոյն բանը կ'ընեմք , տարապարտ համառօտութենէ դուրս չելալու համար : Միայն թէ երկու խօսք՝ Աորին Սրբազնութեան թլխատութիւնը ու մկրտութիւնը մի և նոյն չին . և թէ առջինը խորհուրդ չէ ըսելուն դէմ հակառակորդը նորէն երկու խօսք ընելուն

համար՝ մենք ալ կ'ընեմք :

Բա՛րեկամ այս միջանկեալ նիւթիս վրայ երկարօրէն խօսելու տեղերնիս չը տանելուն համար, փոխանակ քու բոլոր ծուռ դրութիւններդ եղծել աշխատելու՝ որ արդէն դուն ինքնդ եղծած ես զառանցելովդ սա մէկ առաջարկութիւնը կ'ընեմ քեզի :

Ըստ քեզ՝ (եր. 101—102) խորհուրդն է արտաքին նշանակ տեսանելի՝ ներքին անտեսանելի շնորհոյն Մարտինի . ինչպէս Օգոստինոս կը սահմանէ :

Ըստ բարի . Գրօշմն օծութեան և ձեռնադրութեան՝ ինչո՞ւ խորհուրդ չես ընդունիր, որ ներքին՝ Սուրբ Հոգւոյն անտեսանելի շնորհաց բաշխման (Բ. կորնթ. Ե. 21: Մ. Յովհ. Բ. 20. 27. ևճ) արտաքին նշանակն ու կնիքն է : (Մ. կորնթ. Ե. 16) : — Եպաշխարութիւնը (որում կից արդարութեան պահանջած վճարմանց գործքերը) խորհուրդ չես ընդունիր . որ ներքին շնորհաբեր զղջութեան արտաքին նշանակն է : — Վերջին օծումը՝ կամ գիշերժամու ձեռնադրութիւնը ինչո՞ւ չես ընդունիր խորհուրդ, որ ադօթիւք արդարոց հիւանդին ըլլալիք աներկույթ օգնութեանց շնորհաց նշա-

նակն է : — Քահանայական կարգը ինչո՞ւ խորհուրդ չես ընդունիր . որուն ձեռնադրութիւնը անտեսանելի շնորհաց խաղացման տեսանելի նշանակն է : — Պսակը ինչո՞ւ խորհուրդ չես ընդունիր . որուն հանդիսապէս աղօթիւք և ձեռքն ստուգեամբ (կամ ո՛ր և իցէ արարողութեամբ) վաւերացուցումը՝ օրինաւոր ամուսնութիւններու յատուկ անտեսանելի շնորհաց նշանակն է . զոր և սուրբ Մ. Բ. Բ. քեայր խորհուրդ՝ և Ռ. խորհուրդ կանուանէ և այնչափ Ռ. մինչև նման խորհրդաւոր միութեան Քրիստոսի ընդ Եկեղեցոյ . ինչպէս նոյն Մ. Բ. քեայր կը համարձակի՝ շողոյն նմանցընելու : Եսոնք ահա քեզի արդար նիւթ կուտամ երկարօրէն խորհելու . ուրիշ անգամ զրես նէ՛ նայէ՛ որ ասոնք ալ չը մոռնաս . և ան ատեն՝ ես քեզի կը ցուցունեմ՝ Բրօթէսթանդներ՝ որ խորհուրդ կըսեն ասոնց : Որուն թէպէտ ինքը կը հակառակի բայց ստուգեամբ :

Բրօթէսթանդներ կան՝ որ շատ հակառակ կը խորհին՝ ինչ որ մեր հակառակորդը կը խորհի : Եսոնց անհամար բազմութեանը ձիշդ թիւը չը գիտցուիր . Եմերիկայի՝ Արլ—Սօրք քաղաքի Եկեղե-

ցական օրագիրը՝ «Մեր Ներքե Բողոքականաց այլ  
 և այլ աղանդները մինչև 71 հատ յանուանէ  
 յիշատակելէն ետև» (զորս ուզողը կրնայ  
 տեսնալ 1860 տարւոյս Մասեաց աղաւն  
 ւոյ 68 երեսը, հինգերորդ տարի, Թիւ  
 Դ. ապրիլ ամսոյ), «վրայ կը բերէ» Թէ  
 «անշուշտ մէկ քանին ալ մուսուլմանաց պի  
 տի լինի»: Այլ ասոնք յոյժ տարբեր են  
 ՚ի միմեանց և անմիաբան: Բնտարակոյս՝  
 որ Բնկլիքան մը Արիցականէ մը այն  
 չափ հեռու է, որչափ Առատերական մը  
 Օսլինկլեանէն, և յայնս իսկ՝ զորս ու  
 մանք Իրիւսեան և այլք օրիւնեան հարկա  
 ւոր կանուանեն: Հիմակուհիմայ ասոնք  
 կանցնիւք, բայց ցամաք պատգամներ ու  
 ըտտացած չըլլալու համար ընթերցողնե  
 ըր կը հրաւիրեմ՝ բողոքարկուած տպել  
 տուած վիշտասաներորդ դարու բարե  
 կարգութեան պատմութիւնը, դաւանու  
 նութիւններ անուն գրքոյկը, Բնկլիքան  
 Ակեղեցի անուն փոքրիկ տետրակը, և  
 Բնկլիքան Ակեղեցւոյ հասարակաց աղօ  
 Թից ժամերգութեան ծիսարանը, ու  
 վիէննայի միաբանից հրատարակած  
 Մարտինոս Առատերի վարուց պատմու  
 Թիւնը, էն ետքն ալ « Հայոց Ակեղե  
 » սին և Բմբրիկասի քարոզի. » անու.

նով նոր տղուած տետրակը կարդալու .  
 յորում բաւականէն եւլ ըսածնիս կա-  
 պացուցուի : Ալ այն խօսքը զոր սլար-  
 ծանքով կ'ըսէ հակառակորդը՝ թէ բոլոր  
 բողոքականք վրկութեան էական մա-  
 սանց մէջ « միութիւն շողոյն » ունին ,  
 բոլորովին սուտը կելլայ . որ ուրիշ բան  
 ըսել չէ . բայց եթէ՝ Աստուածգիտու-  
 թեան մէջ Տաճկին , Արաբին , Հրէին ,  
 Խուժին , Գուժին , Հայուն , Հուժին  
 ու Պապականին հետ ալ միաբան են բո-  
 ղոքարկուք . ուրեմն ասոնք ամենը՝ « մի  
 » ութիւն ունին շողոյն » : Հետեւաբար  
 մէն մի բողոքական՝ Հայ , Հուժ , Արաբ ,  
 Խուժ , Գուժ եւ Հրէայ է . կամ աս ազ-  
 գերը ամենն ալ բողոքական են . բաւա-  
 կան որ պապական չըլլան . բայց պա-  
 պականին հետ ալ միաբան են ան նոյն  
 էն երևելի կէտերուն մէջ . . . :

Հերիք բա՛րեկամ . ադ դոյն միու-  
 թիւնը սատանաներուն մէջն ալ կայ . « դեք  
 » միաբանին 'ի կորուստ արդարոյն » :  
 — Բայց « զի՞նչ միաբանութիւն է Վրիս-  
 » տոսի ընդ Ռեւիարայ » : Չէինք սպա-  
 սեր Վրիստոնէական ոգւոյն միութեան  
 դիւաց միութենէն չափուելը :

Աթէ աս միութիւնն է բարոզածնիդ

ընդ ամենայն աշխարհ՝ զոր այնչափ պար-  
 ծանօք կը յիշատակես զըթուկիդ մէջ,  
 և որուն համար առ այժմ քննութեան  
 չեմ մտնար, ուրեմն չեմք զարմանարալ-  
 ան պտուղներուն վրայ՝ որ աշխարհս ան-  
 հաւատներով լեցուց :

Ինչպէս, իրաւունք ունէ՞ր ասոր  
 համար Մորին Արքայնութիւնը զքեզ  
 սատանային մատնելու, և հալածելու՝ ինչ-  
 պէս կըսես. ու թէ որ ան բրթեա-  
 թանդները չը մեծարելուն ու վռնտելուն  
 համար հալածող նոր աղանդից պիտի  
 անուանի, քեզ և բու նմանեացդ ինչ  
 անուն պիտի տրուի : Մորին Արքայնու-  
 թիւնը անուղղակի կերպիւ Ձեր ազատ  
 ժողով մը կազմուելնուդ պատճառ պի-  
 տի ըսուի զձեզ բանադրելովն ու վաւրն-  
 տելովք նէ, ձեզի ալ քարոզութիւններ-  
 նուդ անուղղակի պտուղներուն համար՝  
 անուղղակի անհաւատութեան հիմնադիր-  
 ներու անուն պիտի դրուի՞ արդեօք . . .

. . . . . ;  
 Ար կնքեմք հոս խօսքերնիս, ՚ի բո-  
 լոր սրտէ մաղթելով սուրբ Հոգւոյն ի-  
 մաստութեան լոյս շողել աչաց որոց խա-  
 ւարի մէջ են, ու մահուան ստուերին  
 մէջ կը խորդան զբուն կորստեան, որ-


պէս զի առաջնորդէ՝ իւրեանց՝ բանին  
 Մատուծոյ յայտնութեանը մէջ՝ Բարի ճարտ  
 Բարի Իրեպոստոսոս, ըլլալու . ու անոնց ևս՝ որ  
 տիրապէս և ճշմարտապէս չար ճարտ ու  
 չար Իրեպոստոսոս եմք կըսեն . որոց է՛ն յետ  
 նոյն կորուստը երկնից բոլոր հրեշտակ  
 ները ու Մատուծոյ Մեղրանիկները կը  
 տրամեցրնէ անպակաս ցաւօք և լի վըշ  
 տօք . և փրկութիւնը երկնի և երկրի  
 միանգամայն ցնծութիւն մեծ և խնդու  
 թիւն յոյժ՝ անպատում կը պատճառէ .  
 որուն համար աղօթող ըլլալով՝ վստահ  
 ալ եմք՝ որ աղօթքն հաւատով եթէ  
 հակառակորդն ալ ընդունի , չը պիտի  
 զանայ Տէրն շնորհաց զշորհ և զիմաս  
 տութիւն երկնաւոր տեղալու իւր վրան .  
 որով կըլեւորվ զբանիցս այսօցիկ՝ Աորին  
 Արքազնութեան զգօրութի և զճշմար  
 տութեան , Աւետարանի լուսոյն մէջ իւր  
 շաւիղը բանալով Արքայութեան փառաց  
 ժառանգորդ հանդիսանալ պիտի ունե  
 նայ , « Հօրը կնիքը » իւր ճակատը առ  
 նելով . և հարիւր քառասուն ու չորս  
 հազարներուն մէջ ինքն ալ Ամենաար  
 բոյն Մատուծոյ մէկ սուրբ երգը երգե  
 լով . որում ա՛ննեքեան արժանի լիցուք  
 շնորհիւ Հօր և Արդւոյ և սուրբ Հո  
 զւոյն . Ամէն :











1860



4221

« Ազգային գրադարան



NL0031510





4083